৭(৭)
৬-২৪

# ՆԿԱՐԱԳԻՐ

## ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

՚Ի Պարսկաստանէ ՚ի Ռուսաստան.

ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄ



1832. ՚Ի ՄՈՍԿՈՎ. ՌՄՁԱ.

՚Ի տպարանի Հայկական Ճեմարանին Տեառն Լազարեանց.

ՀՐԱՄԱՅԵՑԱՔ ՏՊԱԳՐԵԼ.

Դատաքննիչ գրոց Միքայէլ ծայրագոյն Վարդապետ Սալլանթեանց, Միաբան և Նուիրակ սրբոյ Էջմիածնի.

Ի Մոսկով. ի 3 յունւար. 1832.

18818

# ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

*Գաղթելոյ Հայոց ազգաց՝ յամի տեառն 1828 յատր-պատականէ 'ի սահմանս Ռուսաստանի.*

Ըստ աւանդութեան Սուրբ գրոց՝ զհայաստան աշխարհ հնար է կոչել երկրորդ խանձարուրք մարդկային ազգի. զի անդ 'ի գագաթ Արարատեան լերին՝ նստաւ տապանն Նոյի, յորում միայնակ առկայծէր վերջին յոյս՝ թէ անուն մարդկան ոչ իսպառ անհետասցի 'ի սերընդոց մարդկութեան:

Ըստ կարծեաց պատմաբանից մերոց՝ ազգ մեր կոչի Հայք յանուանէ առաջին նահապետի մերոյ. որոյ անուն նշանակէ զնախահայր առանձին սերնդոյ մարդկան. զի 'ի նախնական լեզուի մեր բազում անգամ 'ի միում և եթ բառի փակի կատարեալ իմաստ:

Հայկ առաջնորդեալ բազմաթիւ խմբում գերդաստանի, եւ 'ի միջագետաց ազատ կացուցեալ զանձն 'ի լծոյ Նեբրովթայ կամ Բելայ. շինեաց 'ի Հայաստան՝ զքաղաքանման ինչ և հաստատեաց 'ի նմին զկառավարութիւն նահապետական: Բէլ ջան եդեալ վերստին նուաճել ընդ ձեռամբ զհայկ, սպանաւ 'ի պատերազմի: Բազումք 'ի փառաւորաց յարձակեցան 'ի սահմանս Հայկայ. այլ նա միշտ արիութեամբ պաշտպանեաց,

և զրաւեցաւ 'ի կենաց 'ի խորին ծերութեան ։ Այս 'ի պատմութիւնս թէ սերունդք նորա տարածեալ ընդ սահմանս Ասիոյ՝ հիմնեցին զայլ և այլ տէրութիւնս. որք յետ ժամանակաց ամբարձան 'ի գերագոյն աստիճանս հարստութեան և փառաց ։

Այս հաւաստիք զնախնի ժամանակաց պատմութեանն Հայոց. որ բոլորէ զառանձին դար կամ շարամանակ, բովանդակեալ յինքեան զամս 2018, սկսեալ 'ի Հայկայ մինչև ցմահն Վահէի վերջին արքայի Հայոց, որ անկաւ 'ի ճակամարտի ընդդէմ Աղեքսանդրու մեծի ։

Երկրորդ շարամանակն, որ պարունակէ զամս 176, յանդիման առնէ մեզ զՀայաստան ընդ իշխանութեամբ Մակեդոնացւոց. և չէ բեղմնաւոր բազմութեամբ երևելի անցից ։

Երրորդ շարամանակն բովանդակէ զամս 588, և սկսանի 'ի տէրութենէն Վաղարշակայ, որ 'ի բաց ընկեցեալ զլուծ Սելևկեայց հիմն եդ միապետական իշխանութեան Արշակունեաց. և արար զդար երևելի առ ժամանակագիրս Հայոց։ Սերունդ արշակունեաց առաւել պայծառացաւ փառօք 'ի պատերազմունս, որ ընդ Խորայելացիս, ընդ Հռովմայեցիս, ընդ Յոյնս, ընդ Պարսիկս և ընդ այլ ազգս ։ 'Ի սահմանս Հայաստանի արծուիք Հռովմայեցւոց երևեցան առաջնորդութեամբ մեծին Պոմպէոսի. և յընթացս այսր դարու փայլեցաւ լոյս Քրիստոնէական հաւատոյ 'ի ծոց Հայաստանի. նոյն և գրականութիւնն ամբարձաւ 'ի գերագոյն վիճակ պանծալի։

Նախնի Հայք յառաջ քան զՔրիստոս ունէին զիւրեանց յատուկ տառ և գիր. որում վկայեն յետագայ հաւաստիք։ Փլաբիոս փիլոստրատոս յոյն իմաստասէր՝ ծաղկեցեալ յաւուրս Կայսերն Սեւերոսի սեպտիմոսի (յամին տն̃ 190=210) երբայց նա զպրոյս և ուսոյց յաթէնս և 'ի հռոմ, բայց յայլոց՝ գրեաց յութ գիրս զվարս դատարկախօս առն ապողոնի։ Զ գրուածս փիլոստրատոսի՝ յոյն և լատին լեզուաւ տպագրեաց 'ի մեծ դիրս յամի տեառն 1709 'ի Լիփսիա քաղաքի Կոտփրանոսս Ոլէարիոս։

Սոյն այս փիլոստրատոս յեկդ գլուխն երկրորդի գրոց վարուցն յիշեալ ապողոնիդ՝ յառաջ բերէ զայս համառօտ բան. || Ցերբեմն
,, ժամանակի 'ի Պամփիւլիա կալեալ եղև էրէ մի՝
,, հանդերձ օղամանեկաւ, զոր կրէր նա 'ի պա-
,, րանոցի իւրում։ Այն (օղամանեակ) էր ոսկե-
,, ղէն և հայկական տառիւք վերագրեալ էր 'ի
,, նմա այս բան,, Արշակ թագաւոր՝ ո̃յն նիսայի,,
,, զի յայնոսիկ ժամանակս 'ի Հայաստան նի
,, թագաւորէր Արշակ||։ Գտանի այս բան 'ի
յիշեալ տպագրութեան Ոլէարոսի յերեսն 50։

Ցայսմ պատմութենէ յայտնի երևի, թէ Հայք յառաջ քան զժամանակս սորին Մեսրոպայ՝ ունէին զայլ յատուկ տառս. զի այդ Արշակ թագաւոր՝ է առաջինն, որ հետ մահու հօրն իւրոյ մեծին Վաղարշակայ Արշակունւոյ՝ թագաւորեաց զամս 13 (յամէն 127 մինչև 114 յառաջ քան զծնունդն Քրիստոսի). որոյ աթոռ թագաւորութեանն թէպէտ էր քաղաքն մծբին 'ի մի-

Ջագեսս, սակայն ըստ պատմելոյ Խորենացւոյն (գիրք, 2, գլխ, 9) գնայ 'ի պատերազմ 'ի վերայ ապստամբ պոնտացւոց մինչև ցեզերս սևածովուն. որոց և յաղթեալ և 'ի հնազանդութիւն իւր վերստին ածեալ, դարձաւ անդրէն 'ի Մծբին. և ապա 'ի գնալն անդ կամ 'ի դառնալն՝ մըտեալ է 'ի Նիսա. որ էր քաղաք՝ ըստ յիշատակելոյ նախնեաց՝ ընդ մէջ սահմանայն Պամփիւլիոյ և առաջին Կապադովկիոյ, յորում էր մեհեանն և արձանն չաստուածոյն Բաքոսի, որ 'ի յիշատակեալ բանից յանուանէ քաղաքին կոչի Աստուած Նիսայի. և սմա նուիրեալ է Արշակ գէրէն զայն՝ ոսկի օղամանեկաւ. գրեալ 'ի նմա հայկական տառիւք ժամանակին զիւր յիշատակ։ Առ Թէոդորետոսի (գիրք 4. գլխ. 28) յիշատակի Գրիգոր եպիսկոպոս Նիսա քաղաքի. այլ և 'ի թուղթ ինչ ժողովական այսր գուառի առ Լևոն կայսր՝ ստորագրէ յոլիոս եպիսկոպոս Նիսսայի. Այս քաղաք փոխարկեալ 'ի գիւղ՝ մինչև ցայսօր կայ 'ի տէրութեան Տաճկաց 'ի փաշայութեան Ղայսէրիոյ՝ կոչեցեալ 'ի նոցանէ Նէվշէ, ուր բնակին տաճիկք և հայք։ Առ հին պատմագիրս յիշատակի և այլ Նիսսա քաղաք 'ի փոքրն ասիա, որ և Նիսսա լեառն ինչ 'ի Հայաստանծի, դուցէ հուպ 'ի վերյիշեալ Նիսսա քաղաքն։

Բայց վասն ունելոյ նախնի հայոց զայլ գիր սեպհական, վկայեն ևս նախ՝ մեծն Վարդան պատմագիր 'ի 13 դարուն, ասելով թէ 'ի հին-
,, գերորդ ամին սորա (ցի Վռամշապուհ արքային
,, հայոց) և յառաջին ամին ալտաշրի որդւոյ

,, շապհոյ, սուրբն Մեսրովպ յօրինէ հայերէն
,, դպրութիւն քան և երկու գիր՝ առ դանիէլի
,, ասորւոյ գտեալ 'ի հին ժամանակաց, որք (գիրք)
,, վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լե-
,, զուիս՝ անհոգացեալ եղեն յառաջնոյն, յոյն
,, և ասորի և պարսիկ գրովք շատացեալք. և
,, Մեսրովպ ոչ կարէր նոքօք փոխել զաստուա-
,, ծաշունչ մատեանն 'ի հայ բարբառն. վասն
,, որոյ աղօթից տուեալ զանձն՝ գործակցութ-
,, եամբ սրբոյն Սահակայ՝ տայ նմա Աստուած
,, զչորեքտասան գիրս, աջովն իւրով դրոշմեալ
,, առաջի նորա՝ որպէս մեծին Մովսէսի 'ի լե-
,, առն Սինայ . . . . . և զի լեալ է հայերէն
,, գիր հնոյն, վկայեցաւ 'ի ժամանակս Լեւոնի
,, արքայի (առաջնոյ, յամին 1198=1219). զի
,, գտաւ դրամ 'ի կիւլիկիա՝ հայերէն գրով
,, դրոշմեալ զանուն կռապաշտ թագաւորաց հայ-
,, կազանց. զորոյ զթերութիւնն ելից նորս մեր
,, եղրաս (ս̃ Մեսրովպ) աստուածախառն շնոր-
,, հօք լցեալ ||:

Վկայեն երկրորդ և բազում հին դրամք կամ մետալք Արշակունի թագաւորաց, պահեալք այժմ յերևելի գանձարանս կամ 'ի հաւաքա-րանս հնութեանց զանազան թագաւորաց եւրո-պացւոց. յորոց վերայ դրոշմեալ տառքն՝ անծա-նօթ և անվերծանելի են այժմեան իմաստնոց. և գուցէ են գիրք նախնի հայկազուն թագաւո-րաց Արշակունեաց:

Յայց վկայութեանց յայտնապէս տեսանի, թէ յառաջ քան զսուրբն Մեսրովբ՝ կային առ նախ-

նիս բուն հայկական տառք. այլ զի անկատար և անյարմար էին 'ի կապել զլեզուն հայոց՝ թաղեալ եղեն 'ի լռութեան. վասն որոյ և Մեսրովպ աստուածային շնորհօք հնարեաց զնորս և զլխագրոյնս. զորս այժմ վարեն հայք ։

Լեզու հայոց բաժանի այժմ 'ի գիտնական և 'ի քաղաքական, որք և չունին ինչ նմանութիւն ընդ այլոց արևելեան լեզուաց ։ Գերազանցութիւն լեզուի Հայոց կայանայ թէ յառանձին իմն ազգութեան՝ նմա միայնում սեպհականելոյ. և թէ 'ի հարստութեան բազմազան բառից գիտութեանց և արուեստից ։ 'Ի գիտնական բարբառն կատարի և աստուածային պաշտօնն. զոր և անշուշտ պարտին ուսանել ամենեքեան, որ կամիցին մտանել 'ի վիճակ եկեղեցական ։ Այս երրորդ դար աւարտի յամ տեառն 428. որ է ժամանակն անկման Արտաշրի երրորդի, որ վերջին եղև 'ի սերունդս Արշակունեանց ։

Յընթացս չորրորդ շարամանակի՝ որ տևեաց զամս 430, Հայաստան գտանէր ընդ կառավարութեամբ տեղակալաց Պարսից, Խալիֆայից և Յունաց ։ Յայսմ չարաբաստ դարու Հայաստան բաց 'ի քաղաքական թշնամեաց՝ ստիպէր ևս յորդորել պճակատ պատերազմի ընդդէմ անհաւատից. վասն որոյ և յանդիման լինին մեզ սաստ մարտք քրիստոնէից ընդդէմ հեթանոսաց և զանազան հերետիկոսաց. ևս և կորովի շահատակութիւնք Վարդանանց և այլոց առաջնորդացն Հայոց. որ նուիրեցին զանձինս 'ի պաշտպանութիւն եկեղեցւոյ ընդդէմ սրբապիղծ

կռապաշտից Պարսից, որով և Հայաստան ասպարէզ էր լայնածաւալ յուսուրան յայնոսիկ ալէկոծութեանց և աւերութեանց ։

Հինգերորդ շարամանակն Ճառէ զբագրատունեան արքայից, որք ըստ կարծեաց ոմանց 'ի պատմաբանից հայոց՝ էին սերունդք Աբրահամու և Իսահակայ, որ է ծագեալք յազգէն Հրէից · յորոց՝ 'ի ժամանակի գերութեանն բաբելացւոց՝ մի ոմն Սմբատ անուն՝ եկն 'ի Հայաստան · զորոյ ըղձերունդն զԱշոտ խալիֆայն տաճկաց ամբարձ 'ի գահ արքունի յամի տեառն 859 ։ Ընդ իշխողութ̅ արքայիցս այսոցիկ ծն հայոց Ճաշակէր սակաւ ինչ զքաղցրութ̅ խաղաղաւէտ անդորրութեան · յորոց և ոմանք ոչ ամաչելով 'ի փոխառեալ իշխանութ̅ իւրեանց՝ համարձակեցան կոչել զինքեանս Արքայից Արքայս կամ Շահնշահս · որ համեմատի այժմեան Իմբէրադորայ ։ Բայց վասն յաճախելոյ 'ի միջի սոցա ընտանի պատերազմաց, վասն անկարգութ̅ կառավարութ̅, և վասն պ̅պ̅ խռովութեանց իշխանացն՝ կործանեցաւ տոհմս այս թագաւորական 'ի 1045 ամի տեառն ։

Վեցերորդ շարամանակն ժամանակագրութ̅ Հայոց Ճառէ ըզռուբինեանց, որ ծագեցան 'ի Ռուբինէ, յարխական զօրագլխէ և յարենակցէ գագկայ վերջին շառաւիղի տանն բագրատունեանց ։ Ռուբէն մարթացաւ 'ի 1080 ամի հիմնել 'ի Կիլիկիա զփոքր թագաւորութի · որոյ յաջորդացն իշխանութիւն, զորս շաղկապ բարեկամութ̅ և սիրոյ զօդէր ընդ խաչակիր զօրս լատինաց, եղև կա-

րի սահմանաւոր ։ ՚Ի ժամանակս թագաւորութ սոցա տեսարան էր Հայաստան անընդհատ ներքին աղէկոծութեց և արտաքին յարձակմանց Տաճկաց, Սկիւթացւոց, Թաթարաց, Պարսից, Յունաց և Եգիպտացւոց ․ յորոց վերջինք և աւարեղին իշխանութեան ռուբինեանց ՚ի 1375 ամի տեառն․ քանզի տպերջանիկ արքայն Լևոն վեցերորդ, գերեցեալ ՚ի թագաւորական փառաց և ոչ մարթացեալ տանել հարուածոց սրտին, զոր պատճառեաց նմա անկումն տէրութեան իւրոյ, գնաւեցաւ ՚ի կենաց ՚ի փարէզ ՚ի 1399 ամի, ուր և թաղեցաւ ՚ի տաճարին Կեղեստինեաց․ ընդ որում վերջացաւ և մարմնաւոր թագաւորութին ազգին Հայոց ։

՚Ի վախճանի այդր ամի՝ սկսանի եօթներորդ շրջամանակն, յորում տեսանին տարագրիլն Հայոց ՚ի ծոցդ Հայրենեաց, վիճակն առաքելական եկեղեցւոյն Հայոց, յարձակումն Լանկթամուրայ, կատաղութին Շահ Աբբասայ, և խրոխտ յարձակմունք Տաճկաց ՚ի Հայաստան ։

Հայաստան յընդարձակ տարածութեան իւրում սահման ունէր ՚ի հիւսիսոյ՝ զսեաւ ծովն, զվրաստան և զտէրութին աղուանից․ սահմանք նորա յարևելս կոյս էին՝ Մարք, Պարսկաստան և Կասպից ծով․ ՚ի հարաւոյ՝ միջագետք և Ասորեստան․ յարևմուտս՝ ասորեստան և ասիական մասունք արևելեան Կայսերութեան ։

Գրեթէ ՚ի սկզբան հնդետասան դարուն մեծ մասն երկրի Հայաստանի անկաւ ընդ տէրութ Տաճկաց․ իսկ այլ մասունք մտին ՚ի հպատա

կուի Պարսից ։ 'Ի գաւառն ատրպատականի և 'ի քուրդաստան շատ թէ սակաւ կային նախնի հայ բնակիչք ․ որք զրկեալք 'ի քաղաքական տէրութէ, անկարուստ պահէին զքրիստոնէութի․ և մն այնորիկ ոչ խառնակէին ընդ մահմետականս, որք ունէին զնոսա իբրև 'ի մշտնջենաւոր պաշարման ։

Առաջին Նիկողայոս կայսր Ռուսաց՝ ընկալաւ զիշխանութի նախնեաց իւրոց 'ի տաճկական համգամանս, զոր եդ 'ի վերայ ուսոց նորա անքըննելի Նախախնամութին Ածային․ ա̃ համայն տեսանէր, թէ իմ իմիք ցանկայր նա, խաղաղութե՞ թէ պատերազմի։ Այ՛ գործք նորա մինչև ցանակնկալ յարձակմունս Պարսից 'ի սահմանս Ռուսաց 'ի վերջին ամիս 1826 ամի, ուխեղերահռչակ վկայեն, թէ կայսրն ունէր իւրեան զմի և եթ նպատակ, զնեղեալն շինութի ռուսաստանի և զընդհանուր երջանկութի հպատակաց ։ Սաստիկ էր յարձակմունս պարսից ․ բայց տեսին զաստուածագոյն ևս Ճակատամարտս եղեալ ինքեանց ընդ առաջ ։ Նախ յաղթութին, զոր արար հայազգի քաջամարտիկ զօրավարութն Մատաթով մերձ առ Լամխոր 'ի մէջ պարսից ․ և ապա պատերազմն Գանձակայ, այն է՝ Ելիսաբէթպօլսի, նախադուշակեցին զա պարտայ վիճակ նոցա ․ զունդն կովկասեան զօրաց ռուսաց առաջնորդութ մեծ զօրավարին Պասկեվիչի վրէժ առնլով յաւերչաց խաղաղութե, էանց ընդ Ակզիբիս, ընդ Պէկատատ և ընդ լերինս բամպակից ․ եմուտ յԷջմիածին և 'ի հին Նախիջևան, փայլակնաձև արագութ նուաճեաց

զԱրբասապատ, զՍարտարապատ, զԱճրեան, զՄարանդ, զԹաւրէզ · ձգեցաւ 'ի Մարաց և 'ի Խոյ, և հուսկ յետոյ ցանցի էառ յԱրտաւիլ և 'ի ստորոտս լերին Կափլանկու :

Ցայցանէ քաջայայտ երևի, թէ բոլոր գողցես պարսկային Հայաստան նուաճեալ եղև թէ զօրուք զինու Ռուսաց և թէ փոյթ եռանդն գործակցուք սիրոյ Հայոց առ Ռուսաստան : Քաջայաղթ հանդիսացաւ զօրուն որոյ, որ պաշտպանէր ճշմարտուե, ես և յայնժամ, երբ նոյն ինքն բնութին ըստ երևութին վարէր ընդդէմ յաղթականաց. զի յընթացս ողջոյն ամառան այնչափ սաստկանայր հրատապ ջերմուն արևու, մինչև յամ քայլափոխ կասել զընթացս ոտից :

Բնակութք հայոց ըստ խորտաբորտ լեռնաձև գրից Պարսկաստանի զառնին կամ 'ի սառնապատ բարձրաւանդակս, և կամ 'ի ջերմագին ծործորյորոց ծագէր և զանազանութին վաճառականութե, զորոց նոյն ինքն տեղական բնութին ցուցանէր զճանապարհս և զմիջոցս : Դժուարին է ընդունել ըզկարծիս հեղինակի գրոցն՝ կոչելոյ Մ*** օրէնոյ, ոյք թէ առաքինութիք մարդոյ կախիցին զանգւոջէ : Առաքինին զհիմն իւր ունի 'ի հողոջ · իսկ 'ի տեղւոջ գտանէ զաղբերս վաճառականութե · մնկ ոմանք 'ի գաղթական Հայոց անկէին զօրթս խաղողոյ և գործէին զերկիր, զոր առ պակասուե գետոց 'ի պարսկաստան՝ ոռոգանէին արուեստահնար Ճարտարութք · իսկ այլք բազումք պահէին զհօտ բազմաթիւ խաշանց :

Քաջայայտ է՝ թէ 'ի մասին անխոնջ վաճա-

տակոց եւ խոհեմական նախատեսութ, Հայք զաւաջինն ունին զտեղի յԱսիա ՚ի գործըս վաճառականութե ։ Եւ եթէ յայնմ իսկ կողման Ծի, ուր տիրէ անկողպար ինքնիշխանութի եւ ցաւալի վիճակ արհամարհութ ազգաց, որ խոչ ընդ առն լինի լուսաւորութ մտաց, Հայք գերազանցէին յառաջադիմութք ՚ի վաճառս, զոր յորդորէր լաւագոյն տափճան ունէին վերամբառնալ զայն ՚ի բարեկարգ համզամանս կենաց։ Աշխատասիրութին է հոգի վաճառականութե. եւ Հայոց զօրացեալ այսպիսի հոգւով շինեցին բնակարանս գեղեցիկս եւ մաքուրս արտաքուստ եւ ներքուստ, հաստատի գոլով թէ տանին յատկութին անշուշտ պահանջի առ պահպանութի առողջութե, որ գանձ է անգին վս փոյթ եռանդն աշխատասիրաց։ Դաշտք նոցա ծաղկէին առատուք, եւ ՚ի սկզբանէ մարգագետինս ճարակէին հազարաւոր խաշինք ։ ՚Ի ձեռն անսպառելի տուրեւառից յորդեցին նոքա զնոր ճանապարհ յառաւել աճումն բարօրութ իւրեանց։ Բայց տակայն յԻնչ պէտս են լերինք ոսկւոյ, եթէ արդար պաշտպանութին ոչ տանէ ապահով զստացուածս բնակչաց եւ զպտուղ նոցա. կամ ոչ հաստատէ զբարօրութի քաղաքացեաց. որ կայանայ յաճման տուրեւառից եւ ՚ի յառաջատուե վաճառականութե ։

Հայք զուրկ յայսպիսի քաղաքական կենաց զընկալք, զոգցես ՚ի կապանս էին կորուսանել զբարօրութի իւրեանց. եւ երկուցեալ թէ գուցէ ՚ի պատճառս հարստութ կեղեքեսցին ՚ի բռնաւորաց, պարտաւորեցան ՚ի կիր առնուլ զգանձս ՚ի

նորոգումն անշարժական կալուածոց, կամ 'ի գնել զնորայսն ։ Այսպէս ընեռեալ էին նք յերկրի խորդախանձ տիրապետաց շղթայիւք բռնակալութե. որ ջանայր տիրել մարդկան, և ոչ երջանիկ առնել զմարդկութի ։

Ի՛ր երբեմն, զի ծաղկէր իմաստութի յեգիպտոս, ուր ընթանային Սողոնք և Պղատոնք քաղել զբարձրագոյն մակացութեց դպրութս. և էր զի խաւարէր անդ լոյս գիտութեց՝ և այն 'ի բազմաւեր սրածութեց, զորս յարոյց ձեռն Օմարայ, հրոյ տուեալ ճարակ ըզմատենադարանն օղխմանդայ ։ Ծաղկէր երբեմն և Պարսկաստան ճշմարիտ ուսմամբք. յորոց միջի տուեալ գերագոյն փայլէին երկեակ կանոնք, զոր հարկիւ ունէին ուսանել թէ որդիք արքայից և թէ մանկունք հասարակաց. այն է՝ լինելն շնորհակալ և արդարադատ ։ Եթէ պարսիկք համաձայն արդարադատուե, որ խնդրէ զանխախտուի իրաւանց՝ մանաւանդ հօղևորաց, ոչ արգելուին զայս յաղատ Անապաշտութե, այդ ցուցանէր թէ ոչ խապառ արկին 'ի մոռացօնս զիմաստութի նախնեաց իւրեանց ։ Այլ արգելուլ նոցա զգանգակս, բայց 'ի փառս Եջմիածնի և 'ի միոյ եկեղեցւոյ հայոց 'ի Սալմաս քաղաքի, ցուցանէր թէ առնէին նք զայդ կամ մն ցանկաւ իւրեանց կամ մն օտարի։ 'Ի մի այսր ամի հնար է առնել, թէ դաւանին իմն երկիւղ ոչ թողուլ տայր նոցա արգելուլ զԱնապաշտութի քրիստոնէից ։ Պարսիկք, որպէս յայտ իսկ է, մեծարեն զորդի կուսին Մարիամու, և հաւատան, թէ նա դալոց է 'ի կատարածի դարուց

սպանանել զդեւն կամ զսատանայ , և թագաւո-
րելոյ յերկրի զամս 40 . յորոյ զկնի լինելոց է ա-
հեղ դատաստան : Իսկ արդ՝ եթէ և ընդ ծան-
րագոյն լծով իշխանութեան Պարսից՝ Հայք ոչ կո-
րուսին զյիշատակ նախնեաց իւրեանց. և 'ի սիր-
տըս նոցա ոչ անհետացաւ զգացումն ընդաբոյս
սիրոյ առ հայրենիս , գործ էր այս Նախախնա-
մութեան. որ ոչ հայելով 'ի հայթայթանս նուրբ քա-
ղաքականութեան , ածէ զազգս 'ի նախակարգեալ
նպատակ նոցա : 'Ի տաճարի նախասահմանութեան ,,
ասէ իմաստունն Ակիւլոս‘‘ անկորուստ պահպանին
ամ անցք , որք կատարին յերեսս երկրի :

'Ի վաղնջուց երեւեցաւ աստղին հպատակութե
Հայոց առ Ռուսաստան . այլ առաւել պայծառ
յայտնեցաւ յաւուրս մեծին Պետրոսի . մանա-
ւանդ երբ Հայք իբրեւ եղբարք ընդ քրիստո-
նէութե , միացան ընդ Ռուսս , զի երկպատիկ զօ-
րութբ մարտիցեն ընդդէմ Պարսից : Ռուսաստա-
տան քանալով զընդարձակ ծոց իւր առաջի
ամ ազգաց , որք են եղբարք միոյ գերդաստանի
մարդկութե , տայ զօրինակ միաւորելոյ զազգս ամ :
Մեծն Պետրոս ցանկալով ընդարձակել զվա
ճառականութի իւր յԱրեւելս , ոչ կարաց թողուլ
'ի բաց զՀայս . այլ ջանաց ձգել զնս առ
ինքն թէ վասն օգտից Ռուսաստանի և թէ վս
երջանկութե նոցա : Մեծ լուսաւորիչն Պետրոս 'ի
պարսկաստան 'ի բազում ձեռնարկս անձամբ
զփորձ էառ անյողդողդ հաւատարմութեան ազ-
գին Հայոց . յորոց 'ի փոխարինութի պարգեւաց
նս հրովարտակաւ զբաղում արտօնութիս , զստան
ձին խրատունս և գթերապանութիս 'ի պատճառս պա

տերազմական շահատակութեանց և երևելի ծառա-
յութեանց նոյա :

Նա կոչեաց 'ի ռուսաստան զբզմ՝ հայս ընդ զհաւատակիցս. յորոց միջի յետ ժամանակաց հռչակաւոր հանդիսացաւ գերդաստանն Լազարեանց, որ է կենդանի պատկեր քաղցր խնամարկութեան տէրութեան Ռուսաց առ որդիս հնոյն հայաստանի : Անցեալ էր դար մի ողջոյն յառաջքան զայս վերջին պատերազմ, յորմէ հետէ գերդաստանն Լազարեանց պայծառանայր 'ի Մոսկով և այլ 'ի Պետրպուրկ, զի յասիական բնութեան յաւել և զեւրոպէական լուսաւորութիւն. կառոյց զեկեղեցիս յերկուս մայրաքաղաքս և յայլ զանազան տեղիս. հիմնեաց զմեծամեծս Տպարանս, նուիրեալ օգտի հասարակաց. բայց յայդցանէ հիմնեցաւ 'ի նոցանէ և Ճեմարան արևելեան լեզուաց. որ ընդունի 'ի ծոց իւր պհամբակս հայոց և զռուսաց : 'Ի տպագրեալ կարգադրութեանց այսր Ճեմարանի հնար է տեսանել, թէ յայնմ ուսանդին բոլոր ընթացք ուսմանց, յորս միանգամ հիմնի կատարեալ գիտութեանն խարիսխ :

Փողոցն, յորում գտանին Ճեմարանն և տպարանն, 'ի պարծանս Լազարեանց կոչի՝ պողոտայ Հայոց. և ընդ այսմ պատկեր Հայաստանի 'ի վաղուց իսկ էր 'ի Ռուսաստանի, որ կարկառէր առ նա զբազուկ բարեհաճութեան իւրոյ :

Այժմ մատիցուք 'ի կարգ պատմութեան յաղագս գաղթելոյ Հայոց : Գրօշակք Ռուսաց փայլեցան 'ի սահմանսն՝ ուր բնակէին Հայք, որք ընդ ձայնից զինուց ռուսաց լուան

զուրախաբեր աւետիս ազատութեան իւրեանց 'ի լծոյ այլազգեաց, և տեսին զգարնանային ներգործութիւն բնութեան, և զայս նոր յարութեան սրտից իւրեանց: Յամսեանն մայիսի 1827 ամի, յորժամ դեռ գագաթն Պէշապաղ լերին ծածկեալ էր ձեամբ, աջակից զօրագլուխն ռուսաց կեներալն պենկենդորֆ թողեալ զանուն դեսպանութեան իւրոյ առ պարսիկս և զխաղաղական գործս չափաբերութեան, ուստի յառաջարկեց մարտի 'ի դաշտ պատերազմի, առ 'ի փորձել անձին ընդ զօրականաց ռուսաց զփառս քաջութեան և զմահ վն հայրենեաց:

Գիտելով նր զեռանդն զօրաց ռուսաց պանծանօք իւր յառաջ խաղացոյց զնախընթաց գունդն առ 'ի լինել առաջին և 'ի հիւսել զպսակ փառաց: Ընհետացան յերեսաց նր ամ ահագին արգելք զորս եդեալ էր բնութին. արագութ̄ խաղաց 'ի լայնածաւալ հովիտս գաւառին արարատայ, ուրանօր յանապատ սահմանս պարսից յանկարծ երեւեցաւ աչաց զօրացն ռուսաց հնագոյն և նախապատիւ վանքն Էջմիածնի, զարդարեալ հօյակապ գմբէթիւք և բարձրագլուխ հանդիսացեալ 'ի միջի լուսածաւալ քաղցրահոս ջրբերաց. հնչեցաւ յականջս զօրացն ռուսաց մաքրական հնչիւն զանգակի, որք արագ հովանացան խաչանիշ դրօշակաց. և յայնմ իսկ վայրկենի զգացին, թէ լսելի լինի նց բարձրագոչ հնչիւն զանգակացծնողի իւրեանց ռուսաստանի: Հաւատք բացին զդրունս վանացն, հաւատք և փառք մուծին զնս 'ի ծոց հիւրընկալ կայարանին. Ո՛վ տեսարան ազդու և բարեպաշտական: Ելանեն

դասք եկեղեցականաց Էջմիածնի մեծափառ զգե-
ստաւորեալք· եղանեն հրճուանօք և խնդութ̄ ,
մօտ եկեալ տեսանեն զհերոսն ռուսաց և զվե-
հանձն Հովիւն իւրեանց զՆերսէս , զզգօն և
զարժանընտիր առաջնորդն, զպանծացեալն քրիս-
տոնէական առաքինութ̄ք , գեղազարդ յատկութ̄բք
հոգւոյ , և երևելի ծառայութ̄բք որ վս̄ ռուսա-
տանի և որ վս̄ հայաստանի : Հայեն ̃նք ՚ի դէմս
զօրագլխոյն Պենկենդորֆի ոչ ոք յաղթահարողի
ուրուք կամ աշխարհակալի , այլ իբր ՚ի պատ-
կեր հեզահամբոյր աւետաբերի պաշտպանութ̄ ,
զոր պարգևէ նոցա Կայսրն Նիկողայոս առաջին :
Հայք ամբառնային զբարձրագոչ աղաղակ թէ
Նիկողայոս առաջին է առաջին ըստ հաւատոյն և
ըստ մեծահոգի վեհանձնութ̄ · կեցցէ Կայսրն
ռուսաց, կեցցէ Նիկողայոս առաջին տէր և ար-
քայ հայաստանի : Ընդ բացափայլ հաստատութ̄
երկնից , առաջի Աստուծոյն սիրոյ հաստատեցաւ
և ամրացաւ հոգևոր կնքով սրբազան շաղկապն
հայոց ընդ որդիս ռուսաստանի : Զայն երբարձ
Արքեպիսկոպոսն Ներսէս առ ժողովուրդն , և
ամենեցուն սիրտք բորբոքեցան եռանդեամբ առ
Կայսրն և առ զօրս ̃նր : Ծագեցաւ օր ազատութ̄ ,
և փայլեցաւ լոյսն թէ անուն հայաստանի և
բազմաժամանակեայ փառք ̃նր յարիցեն կենդա-
նասցին ՚ի վերայ երեսաց երկրի :

Թողումք աստ զայն , զի հայք նուիրեցին զան-
ձինս և զա̄մ ինչս իւրեանց առ ՚ի լինել գործա-
կից յառաջադիմութ̄ ռուսաց ՚ի մարտի :

՚Ի շրջափակ պարիսպս Էջմիածնի զօրագլուխն

Պենկենդորֆ սահմանաց գլխաւոր տեղի բնակութե իւրոյ, բայց պարիսպք սրբաբնակ տեղւոյն ոչ արգելին զնա ՚ի փութաջան աչալրջութ͞ կարգադրելոյ զզօրս ՚ի պաշտպանութ͞ Երեւանայ, զոր առեալ կատարեաց զտօն նոր յաղթութե͞ն իւրոյ ՚ի սբ͞ բնակարանի անդ Էջմիածնին :

Յայտնի է թէ արքեպսն Ներսէս անքուն արթնութ͞ հոգ տանէր հօտի իւրում, զի նորոգեսցի վերստին հայաստան ընդ հզօր հովանաւորութ͞ ռուսաստանի • յետ գրաւելոյ ռուսաց զԹաւրէժ և յետ ուարտման Տեյկարկաննեան դաշնադրութեց (ուր հայք միայն ՚ի սախմանէ հովւոյ և ՚ի սիրոյ առ արդարութի ցուցանէին զբորբոքեալ ջերմեռանդութի ) առաքեաց նա անդր զեպսն Սահփաննոս ընդ վգմլի ումեմն, պատուիրելով նոց հաստատել զեղբարս ՚ի բարի գործս նոց :,, Ի՞նչ ինձ օգնական է մեր, ասէր, զէն ,, ռուսաց է զէն խաչի : ՚Ի հրաւիրանս ռուսաց ,, մեք լսեմք զբարձրագոչ ձայն Ամենակալողին, ,, որ անօրինէ լաւ կամաց իւրոց զմիջակ տէրութեց ,, և ազգաց : Լսայէք նոյ, այսօր եթէ լուիցէք ,, ձայնի նր՝ մի խստացուցանէք զսիրտս ձեր:

Յայնմ իսկ ժամանակի երեւեցաւ սրտառուչ հանդէս երկնային հաւատոյ, որ բովանդակէ յինքեան զսէր և զողորմութի • և որ բարձր ՚ի վերուստ հանդիսանայ առ մշտակիրս : Հաւատք միաբանից Էջմիածնի պանծացաւ յանքուն խնամարկութե վիրաւոր և հիւանդ զօրաց ռուսաց : Աղանականք այնոքիկ ոչ սպասելով վարձուց ինչ ՚ի մարդկանէ, ցուցին զամենայն մարդասիրութիւն

յօդուտ տառապելոց, ըստ պահանջելոյ գթութ-
եան իւրեանց : Զտիւ և զգիշեր հոգ տանէին
անդադար եղկելի հիւանդացն, և բազմաց իսկ
'ի զօրաց ռուսաց լինէին պատճառ առողջութեան և
կենդանութեան : Շնորհակալութիւն է կենդանւոյն յի-
շատակ փափուկ և դիւրազգած սրտից : Ո՛չ ու-
րեք և ոչ երբէք զօրք ռուսաց մոռացին զմար-
դասիրական հոգատարութիւն վանականացն Էջ-
միածնի :

Զերևեցան հետք պարսից յախական սահմանս
տէրութեան ռուսաց. զէն Պասկեւիչի բարձր 'ի
գլուխ հանդխտացուանդ, ուր երբեմն քաջայաղթն
Աղէքսանդր յերկս պատերազմունս նուաճեաց
զնախնի լայնատարած տէրութին զայն : Պասկե-
վիչ ակն ունելով փութանակի գալստեան ահեղ
թնդանօթից իւրոց՝ դիմեաց ցգետն Երասխ.
երկիւղ և զառանցանք հալածեցին զպարսիկս,
որք կարծէին թէ նոր Աղեքսանդր ոմն հալածէ և
վանէ զնս : Առաջի աչաց թշնամեաց իւրոց հե-
րոսն ռուսաց առաւ զբերդն երևելի յաղթա-
նակաւ, եմուտ 'ի Նախիջևան 'ի հին կենդրոն
արևելեան վաճառականութեան և էառ զամուրն Աբ-
բասապատ : Պարսիկք ալէկոծեալ 'ի հողմոյ
վրիժուց՝ յուսահատութեան և ամօթոյ 'ի սաստ ան-
յաջողութեան իւրեանց, կապեալ ձեռօք այրէին,
կողոպտէին, ամայի առնէին զլաւագոյն զբնակութիւն
հայոց վանելով զնս յայնկոյս գետոյն Երասխայ.
այլ անդ ևս արգելեալ անխնայ վրէժխնդրութի-
նց: Բազումք 'ի հայոց ձեռնամուխ լինելով յամ-
ինչ վս օգտի ռուսաց, թաքեան յանխնայ կա-

տարուէ թշնամեաց, և դարձ արարեալ 'ի բնակարանս իւրեանց փութացան յեղբայրական գրկախառնութի ընդ զօրաց ռուսաց. և այդ արարեալ նոց զամ ընթացս թշնամեաց, եղեն նոց ուղեցոյցք և զինեցան յառաջորդել մարտին:

Միւսանգամ Պասկեւիչն յաղթեաց Աբբաս Միրզայի մերձ առ Ճիվանպուլախ, առանց թնդանօթից ստիպեաց զնա տալ զամրոցն, ըստ հիմնեալն ըստ եւրոպէական կանոնաց. և 'ի զօրաց իւրոց որք մարտնչէին թէ ընդ թշնամիս և թէ ընդ տապացեալ հօրիզոնն պարսկաստանի, զայրուձին եհան 'ի բարձրունս Սալմաստ լերին ուր միշտ թագաւորէ կենդանարար զովութի. իսկ զամ հետեւակս տարաւ 'ի Քարաբաբա 28 ասպարիզօք հեռի 'ի Նախիջեւանայ:

Յայնմ ժամանակի ժառանգն պարսկային աթոռոյն՝ ոչ կարացեալ 'ի կատար հասուցանել զամ նենգութիս իւր, արագապէս եհանց ընդ երասխ, և երեւեցաւ առ պարսպօք Էջմիածնի, ուր կային առ պահպանութի սակաւաթիւ զօրք ռուսաց: ստիպէր նա զասա լինել անձնատուր, բայց խումբն հերոսաց պատասխանէր զօրէն Սպարտացւոց՝ ոչ լիցուք անձնամատն. փառասէրն զէն էառ 'ի ձեռս զխաբէութի, խոստացաւ զարծաթ և զմեծամեծ պարգեւս. ուրանօր կրկին անգամ լուաւ 'ի նոցանէ զնմանահանգէտ պատասխանի, Ռուսք ոչ վաճառեն զանձինս:

Յայնմ ժամանակի զօրագլուխն Նիկողայոս Մարտիանովիչ Միլեակին, յիշելով զյաղթական թուիչս Պասկեւիչի և փորձիւ ճանաչելով

զհարկաւորուն թնդանօթից, ինքնին տարա-
գայն առ զօրապետն Արտաւիլի. բայց 'ի Ճա-
նապարհին մերձ առ գիւղն Աշտարակ՝ յարձա-
կեցան 'ի վերայ Սիպետկնոյ 3000 Պարսիկք, ուր
նա ունէր միայն 1000 զօրս 'ի պաշտպանութիւն իւ-
րեան, բայց և այնպէս յաղթահարեալ զմեծագոյն
թշնամին, պահեաց անվնաս զթնդանօթսն և
հասոյց զայնս ամբողջ ուր հարկն էր:

Ծագեցաւ օրն Աշտարակեան պատերազմին.
մահն փառաց քաջալերէր զզօրս ռուսաց.
վայ հերան Արտաւիլի 3000 զօրաք խուռն եհար
զ12000 Պարսիկս և ազատեալ զԷջմիածին զբնա-
կարանն հաւատոյ և մարդասիրութե, յորդեաց
զճանապարհ յաղթական գնդոց թնդանօթակիր
զօրաց առ պարիսպս Երևանայ:

Յերկրորդ աւուր սկսեալ մբերի զօրքն հան-
դեան զփշերն յեզերս Ալեառուչայ գետոյն.
զօրագլուխն Պասկեվիչ փութայր անձամբ
գննել զթշնամին, որ յայնկոյս գետոյն Երա-
խայ երևեցան 'նմ 500 սպառազէնք. այլ պա-
րոն Շաբելեանն եկն և եբեր համբաւ, թէ
բազմացաւ թիւ թշնամեաց յեզերս Գառնի գե-
տոյն: Գունդն ռուսաց, որ կնայր ընդ առաջ
նոց, արգելաւ յանանցանելի ճահիճէ, ուր և
կորեան բազում երիվարք, մինչև պարտաւորե-
ցան թողուլ զգործն և դառնալ 'ի բանակն:
Յերևանայ բարձրացաւ նշան որ ծանուցց զփա-
խուստն Սրբաս միրզայի համայն զօրօք խուռն
'ի Սարդարապատ: Ռուսք զհետ պնդեալ նոց
յահեակ կողմանէ մեծի Ճանապարհին և գնալով

ընդ շուրջ թշնամեաց, նեղութ. բզմ կրէին յան-
ցանել յառաջ այլովք հանդերձ մն խռովեալ,
որք ընդմիջէին զՃանապարհն. եւ առ 'ի չգոյէ քաղ-
կամրջաց, զոր չէր պատրաստեալ մշակաց: 'Ի
հինգերորդում սեպտեմբերի զօրք ռուսաց մտին
յուղիղ Ճանապարհ. այլ յետ մերձենալոյն ՚նոց
առ գետն Օանկու, ընդառաջ ելին նոց յամբո-
ղջն Երեւանայ զօրք երեք թնդանօթօք, որք գի-
մեցին յԷջմիածին. ուրանօր ընդ առաջ ել նոց
Կրասովսկի կարգեալ ունելով զվէրս ձեռին իւրոյ:
Թէքէն յայժ շատակէին պարսիկք բայց անապան
հասին, եւ առ պարսպօք վանացն կանգնեցին զբա-
նակս. ուր սաէպ սաէպ փոխէին զտեղիս, եւ յին-
ներորդ աւուր սեպտեմ., գնացին 'ի Սարդա-
րապատ: Ռուսք առաջեցին յառաջոյ զպատուա
գէնս ընդ վերատեսչութ. զօրավարին եւ կամօքն
Սուխթելենայ յերասխ, 'ի կուրփայն եւ յերեւե-
լի լեռան աղահանքայ: Կամք նր յայնմ գնդոն
էր գտանել զբաւականութ. կենաց եւ հաւաքել
զբնակիչս, բոտ որոց եւ յաջողեցաւ յայժ նմա
ժողովել անդ զերկերիւր գերդաստանս հա-
յոց որք եառուն նմա առաւել քան զհազար քառս
ցորենոյ: Յերկոտասաներորդ աւուր սեպտեմ-
բերի դիմեալ գնացին Ռուսք եւ կացին յան-
դիման Սարդարապատի. ուր ուղեցոյց եղեն նոց
լեռնաբնակ հայք: 'Ի 13 աւուր 'ի մտի եդ Պաս-
կեւիչ առնուլ ամրոցին. եւ կարգեալ զամ պի-
տոյս առ այն, զբանակն փոխեաց մերձ 'ի Սար-
դարապատ: 'Ի 15 աւուր ձեռն 'ի գործ արա-
րին, այլ 'ի պատՃառս անձրեւոց կասեցան: 'Ի 16

աւուր առին զպարտէզ մի, որ հեռի էր յամրոցէն 200 ոտնաչափօք ։ Անդանօր յերեւիլ ռուսաց ՚ի փայլմանէ լուսնոյ՝ թշնամիք արձակեցին զհուր․ որոտացին և թնդանօթք, բայց ոչ փնասեաց ոմց ։ ՚Ի 18 աւուր կրկին անդամ մերձեցան առ ամրոցըն․ ՚ի 19 աւուր յերեկոյեան պահու Հասան խան տէրն ամրոցին առաքեաց պատգամաբեր խնդրելով զերից աւուրց ժամանակ յապաղման ։ Նա պատասխանի նմ՝ Պասկեւիչ, եթէ ոչ ՚ի նմին ժամու տացէ զամրոցն, յերկրորդում աւուր առից զայն յարձակմամբ, և ոչ խնայեցից ոչ ՚ի կեանս Հասան խանի և ոչ ՚ի պարսպապահ զօրս նր ։ Մինչդեռ նք խօսէին՝ Հասան խան փախեաւ համայն զօրօք յԵրեւան ։ Զհետ նր պնդեցան քանի մի գունդք այրուձիոյ, այլ անցեալ էր ժամանակն ։ Մարտ եղին ընդ հետեւակս պարսից և ՚ի գերուե վարեցին ՚ի նոցանէ աւելի Ք զօրս երկերիւր ։ Յերեկոյեն պահու մտին յամրոցն, յորում գտին զ13 թնդանօթս և զմեծամեծ ամբարանոցս, յորս կային աւելի Ք 14 հզր քառ. ցորենոյ․ որ բաւական էր յընթացս վեց ամսոց վն զօրացն Կրասովսկեայ, որ կարի հարկաւոր էր նոցա ՚ի պատճառս յապաղելոյ սայլից պաշարացն ։ Զօրքն մնացին ՚ի բանակի անդ իւրեանց և վերատուքեցին զաղօթս գոհութե առ Ած․ ՚ի 21 աւուր ելեալ փութացան ցգետն սեաւ կամ՝ ղարասու․ ՚ի 22 հասին յԷջմիածին․ զգիշերն 23 աւուր անցուցին մերձ ՚ի գետն Զանգայ․ իսկ ՚ի 24 աւուր հասին ցպարիսպ Երեւանայ ։ ՚Ի գիշերի 26 յորում լու-

ամսոյն 27 օրն, սկսաւ առաջին պատերազմն առաջի Երևանայ՝ յորում ոչ ոք մեռաւ 'ի ռուսաց, և ոչ ոք վիրաւորեցաւ:

Յայնմ ժամանակի վեհանձն Պասկեւիչ ծանուցեալ 'ի փախստականաց, թէ պաշարեալքն հատան 'ի յուսոյ, և կամելով օգնել առթիւս և արագ 'ի վախճան հասուցանել զպատերազմն, առաջի եդ Հասան խանին անձնատուր լինել, խոստանալով արձակել զնա և զպարսպապահ զօրսն իւր: Հասան խան պատասխանեաց նմա յերկրորդ աւուր, թէ պատրաստ եմ տալ զամրոցն, միայն թէ հրաման լիցի ինձ խորհրդակցել ընդ Աբբաս միրզայի: Այժմ պատասխանեաց Պասկեւիչն նամակաւ և պահանջեաց զամրոցն առանց ժմ թէունէ, եթէ ոչ առէ վաղվաղակի տեսցես զզօրութիւն զինու ռուսացն, և անդէն սաստկացոյց զներգործութիւն հրոյն յամ թնդանօթս:

'Ի գիշերի սեպտեմբերի, յորում լուսանայր առաջին օրն հոկտեմբերի շինեցին զկարգ թնդանօթից մերձ 'ի պարիսպն. և թշնամիք կարծելով թէ 'ի մտի յարձակին նք, զարհուրեալ արձակեցին հուր սաստիկ. մեծ զօրագլուխն անձամբ եկեալ 'ի տեղին հրամայեաց տալ դադար գործոյն: Հուրն թշնամեաց տևեալ ժամս բազումս, սակաւ առ սակաւ դադարեցաւ և հուսկ յետոյ բոլորովին շիջաւ: Հնար է ասել թէ յայսմ գիշերի նոյն ինքն բախտն կարկառէր ռուսաց զձեռն օգնականութեան:

Յառաջնում աւուր հոկտ, յառաւօտեան պահու, յետ շիջման հրոյն թշնամեաց երևե-

ցան ռուսաց քանի մի բնակիչք պարսպին, որք բացեալ զթաշկինակս վազէին դէպ 'ի Թնդանօթս ռուսաց: Զօրագլուխն Լապտեւ, սպառազինեաց զգնդապետսն Հուրկ եւ Շիպով հանդերձ այրուձիովք նց. եւ պատուիրեաց կալ առ հարաւային եւ արեւելեան դրօք առաջին եւ երկդ պարսպաց, զոր եւ նք անյապաղ կատարեցին: Իսկ ինքն Զօրագլխապետն ընդ այլ զօրս իւր եկաց մերձ առ հիւսիսային դրունս առ 'ի լինել արգելք ելից Թշնամեաց:

Քաղաքապահ զօրքն պարսից նուաճեցան յառաջին աւուր հոկտեմբերի. եւ սակաւ միայն մասն զօրաց, որ ընդ իշխանութ. Հասան խանի, ոչ կամէր բանալ զդրունսն: Զօրքն ռուսաց՝ տեսեալ զայս յանդուգն ընդդիմակայութի, մտին ընդ ճեղքուածս պարսպին, եւ յընթացս միոյ քառորդի ժամու՝ տիրեցին քաղաքին: Հասան խան մտեալ երկու հարիւր զինուորօք 'ի մզկիթ իւր՝ Թագեաւ անդ յապրիլ մազապուրծ, այլ 'ի զուր, զի ռուսք խորտակեցին զդրունս մզկիթին եւ կալան զնա եւ զզօրս նր: Կոմսն Սուխտելին ինքնին ձեռօք իւրովք կորզեաց 'ի նմանէ զզէնս. Որպիսի հարուածով վիրաւորեցաւ գոռոզն եւ փառասէրն Հասան խան, որ միայն զինքն համարէր անյաղթ տիրող մարդկան: Բաց 'ի Հասան խանէ՝ գերեցան յերեւան այլ եւս իշխանք պարսից: Նդան պահապանք առ ամ գործարանս վառօդոց: Մին յանձնապահ հարիւրապետաց անուանեալ Լելեակին՝ ետես զբոցավառ պատրոյգ 'ի ձեռի Թնդանօթի, աներկիւղ ձեռամբ 'ի բաց

խլեաց զայն, որով և աղատեաց 'ի սոսկալի վնասուց զզօրսն :

'Ի պարխպն անդ Երևանայ' երևելի են միայն մզկիթն և տունն Սարդարայ . փողոցք նեղ են և անկարգ : Կացեալ անդ զաւուրս չորս' եղ Պասկեվիչ զօրք հանդերձ յառաջին խուր բանակ, թողեալ յամրոցին զքաջաքաջ զօրս . Կրասովսկի կարգեցաւ պետ նորանուաճ երկրին, ուր և սահմանեցաւ ժամանակաւոր կառավարութի, յորում Կրասովսկի և Արքեպն Ներսէս միասին գործակից լինէին ընդհանուր օգտի : Հերսայ ռուսսից և կառավարութե նորին յայտ է, թէ զորպիսի ծառայութիս եցոյց 'ի պատերազմին պարսից այս հովիւ եկեղեցւոյն Հայոց, որ ոչ խնայէր ոչ 'ի կեանս և ոչ 'ի քրտունս : 'Ի դիմել զօրայ' անձամբ գտանէր նա 'ի գունդն նոցա, ուղեկից լինէր նոցա և անձամբ ներգործէր 'ի ծանր դժուարութիս : Առաջի արասցուք զհատուած բանից կայսերական հրովարտակին որով տուեալ լինէր խաչ Սրբոյն Աղեքսանդրայ Ներսիսի : ,, Սրբազան Ներսէս ար-
,, քեպս Հայոց . 'ի վաղ ժամանակաց և 'ի բա-
,, զում պատահմունս ցուցէք դուք զկատարեալ
,, հպատակութի ձեր առ ռուսստան, բայց ա-
,, ռաւելապէս յայսմ պատերազմի ընդ պար-
,, սիկս :

'Ի վերայ այսր ամի' Պասկեվիչ հաստատուն յուսայր 'ի հաւատարիմ հպատակութի հայոց առ ռուսստան . և դիտէր թէ նք և վասն սիրոյ իւրեանց առ ռուսստան, և վն խնկան օգտի

խուրեանց զինեալն զանձինս. առ սպարապետն Երեւանայ՝ ըստ բարեմիտ զգուշութեն Զօրագլխապետին՝ կարգեցաւ հաստատելինդ պատնէշ 'ի սայլից. յարգելուլ զԱբբաս Միրզայ, եթէ կամիցի յարձակիլ 'ի մի ռուսաց 'ի յետուստ. այլ զլխաւոր ամրութիւնք ռուսաց էին սիրտք ջերմեռանդն Հայոց։

Զօրագլխապետն Պասկեւիչ ցանկալով զրաւել զպարսկահայս՝ հաճութ Կայսերն առ ինքն կոչեաց 'ի Բեդրպուրկից զհազարապետն Լազարու, զորդի մեծի իշխանապետին յովակիմայ Լազարեանց. որոյ և լոկ անունն գրաւեաց զսիրտ հայոց առ 'ի փոխադրել 'ի ռուսաստան. վասն 'ի ժամանել նր 'ի բանակ անդր, և յանցանել զօրագլխոյն Երիստովայ ընդ գետն երասխ, առենակալն զօրաց Մուրավիով վաղվաղակի յանձն արար հազարապետին հայոց Լազարու՝ հսկել զնոցին զօրաց, կարգել զգունդս զունդս զտանել զհաւատարիմ ուղեցոյց, և առնել զհաղորդակցութի ընդ բազմութիւ հայս տորպատականի։ Լազարեան իշխանն մեր լինելի 'ի կատար էած թէ զայդ ամ պաշտամունս և թէ զվստահութի Տէրութե և զօրագլխոյ նր։ Երբ ռուսք հետամուտ եղեն թշնամեաց 'ի կողմանս Զորոլի. երբ յետս դարձան ցգետն երասխ, և երբ յարձակեցան 'ի մի քաղաքացն Մարանդայ, և Դավրէժու՝ որոյ բնակիչք 'ի ներքս առին զԱպպաս միրզէ, հայք ամ ուրեք կենսաւորեալք բանիւք Լազարեան զօրագլխոյն սիրալիր վստահութե խառնեցան ընդ զօրս ռուսաց և մատուցին ծառա

յունս գերօգտակարս առանց անձնախնդիր շահեկանութեց:

՚Ի մայրաքաղաքի անդ Ատրպատականի ՚ի Թաւրէժ գոյ թաղ Հայոց, զատեալ յայլ ամ մասանց քաղաքին, և ՚ի թաղի անդ հին եկեղեցի Հայոց, որում կանխաւ իսկ տուեալ էր հրապարակաւ հարկանել զանգակս:

Այլ ՚ի զուր իշխանք Պարսից խորհէին, թէ լռութ զանգակաց լռեսցէ ՚ի սիրտս Հայոց սէր առ Հայրենիս: Հազիւ հօյ բնակիչք թաղին տեսին ՚ի հեռուստ զծածանեալ դրօշակս ռուսաց. հազիւ լուան ոք զաւետաբեր ձայն ռուսաց՝ անդէն թափորական զարդուք խաչի և սրտեռանդն աղօթիւք դիմեցին ընդ առաջ եղբարց իւրեանց Ռուսաց: Նոքա հեղուին զարտասուս և բարձրագոչ աղաղակէին՝ կեցցէ Նիկողայոս առաջին. կեցցեն զօրք ռուսաց: Ձեռք և սիրտք նոց մատուցանէին զօրացն ռուսաց զամ պարգևս հոգեպարձ հիւրընկալութե:

՚Ի 19 աւուր-Հոկտեմբերի 1827 ամի եկն ՚ի Թաւրէժ Գիւլին զօրացն Ռուսաց, որ և ՚ի վարձ ծառայութեցն գնդապետին Լազարեւի և ՚ի տարածել զփառաւոր անուն և օգտաւէտ աշխատանաց նր, արար զնա Քաղաքապետ Թաւրէժու, որով և կրկին պսակեցաւ նախատեսութե Պասկեւիչի:

Հազիւ թէ տարածեցաւ համբաւն, թէ Լազարեֆ եղև քաղաքապետ Թաւրէժու, անյապաղ յամ նահանգաց Ատրպատականի, արագ փութացան Հայք ՚ի Թաւրէժ: „Ազգակից մեր „ես„ ասէին նոքա ցԼազարեֆ, բարեխօս լեր մզ

„ մեր առ բարեսիրտ և մեծ արքայն Ինքնակալն
„ համայն ռուսաց. բարեխօս լեր առ երևելի
„ զօրապետանն՟ըր : Նուիրաբերեմք զանձինս մեր
„ ընդ հովանեաւ աջոյն Նիկողայոսի : Ուրախ
„ եմք մեք կեալ և մեռանիլ ընդ տէրութ՟ նր :

Գովցես անհաւատալի էր այսպիսի անդաշն ինքնամատոյց լինելն Հայոց : Այլ Լազարեւն, որ հաւատաեաւ գիտէր զհոգի ազգակցաց իւրոց, հաստատէր, թէ այն ամ՟ զոր բանիւ ասէին ն՟ք, 'ի վաղուց իսկ սպասուրեալ էր 'ի խորս սրտից ն՟ց : Յետ այսորիկ հաստատեցան առաջին հեմունք առ հաստուցանել 'ի կատար զայս գործ. և 'ի գործ եդան նախագծոյն հնարք առ յառաջադէմ հասանելոյ վախճանին :

Այլ մի մոռասցուք զայն, զոր միանգամ ուսուցանէ մեզ Պատմութիւն : Խրատատուի պատմութե՟, ասաց հեղինակ ոմն, նման են աշտարակի, յորոց մի վառեն զճրագ 'ի մըրկայոյն գիշերի, զի նաւորդք 'ի ժամ վտանգաւոր ալէկոծութե՟ տեսցեն զնաւահանգիստ փրկութե՟ իւրեանց : Յորժամ Աղեքսանդր խաղաց 'ի վերայ արքային պարսից, ասէ Պօլիւբիս. դիւրին էր գուշակել թէ կարգն յաղթեսցէ անկարգութե՟ : Ճշմարիտ է այդ, բայց հաւաստի է և այս, թէ երամք անկիրթ ընկերաց ոգևորեալք սիրով առ հայրենիս յաղթեն յոլովակի կրթեալ զօրաց : Յատկական տէրութիս սէրն առ հայրենիս է երևութական իմն կեղծիք: Պարսիկք ոչ մարթացան նոյնպէս մարտնչել վ՟ն հաւատոյ. քանզի տէգք ռուսաց փայլէին ոչ 'ի ջնջել զդաւանութի Ալիին, այլ 'ի վրէժխնդրուի անկարծ յարձակմանց նոցա 'ի սահմանս ռուս-

սկոյ։ Ո՛չ լինիմք մեղադիր Աբբաս միրզայի, այլ ցաւիմք, զի բարձրագոյն ինքնահաւանութեան նր̄ միշտ և ա̄մ ուրեք փորեաց վ̄ իւր զխորխորատ և ձգեաց զմարդկութեան 'ի կորուստ։

Հուսկ յետոյ աղէտալի փորձառութիւնք ցուցին Աբբաս միրզայի, թէ նա զնորաժողով զօրս իւր արար զոհ անփախչելի մահուան։ Բայց և սա յուսալով լնուլ զպակասութիւն զօրաց երկարութեամբ ժամանակի, ձեռն էարկ միայն 'ի գտանել զխաբեբայական քաղաքավարութեան, որում սակաւ ուրեք յաջողի։ Յայժ հաւատալի է թէ Զօրագլխապետն ռուսաց ծանեաւ զխաբէութիւն ախոյեանին իւրոյ։ Այլ գիտելով, թէ թագաւորն Նիկողայոս խնդրէ զուղղութիւն և զերջանկութիւն ռուսաց և ոչ զմիգապատ փառս յաղթահարողի, հաճեցաւ ընդ դաշնադրութիւնս։ Նշանակեցաւ 'ի Պաւկեվիչէ և 'ի ժառանգէ գահին պարսից Տէյկարկան տեղի տեսութեան իւրեանց և դաշնադրութեան խաղաղութեան։ Յայնժամ Լազարեան կատարեալ էր զգործ իւր 'ի Դէավրէժ. և կրկին անգամ կարգեալ էր պետ մեծի բանակին ռուսաց 'ի Տէյկարկան։ Յայսմ տեղւոջ, որ եղև երևելի դիպուածով անսովոր պատահմանց, գտանէին քանի մի տունք հայոց, և որովհետև գտանէր իբրու 'ի կեդրոնի ինչ. վ̄յ դիւրին էր անտի ներգործել Լազարեանն 'ի վր̄ Հայոց Սալմաստոյ, Ուրմիոյ, Մերիկից, Միանոյ և Խոյի։

Թուէր թէ 'ի Տէյկարկան դիմեցին ա̄մ հոգիք, ա̄մ միտք և ա̄մ կամք հայոց։ Ո՛չ երկեցուցանէր զնս̄ և այն, թէ գետն Երասխ է սահ-

մամն 'ի մէջ երկուց տէրուե̅ց : Նախնի հաստա-
տութ̅ հօգւոյ զխմէլին նք առ եղբարս իւրեանց առ
քրիստոնեայս 'ի գաւառս ռուսաց , հովանաւո-
րեալ դրօշակօք կենդանարար խաչի • և դար-
ձուցանելով զերեսս յառիւծոյն պարսից , առ-
նուլին ինքեանց առաջնորդ զԱրծիւն Ռուսաց :
Յայնմ ժամանակի Շահն փոխեալ զմիտս
նորահնար խորամանկութ̅ որդւոյ իւրոյ Հասան
Ալի միրզայի , տատանէր յերկմտուե̅ և հաստա-
տել անդխտանայր զդաշն խաղաղուե̅ , որ 'ի Տէյ-
կարկան : Գնդապետն ռուսաց համախօս լինե-
լով վեհանձն դխտաւորուե̅ Կայսեր խաղաղասիրի՝
տանէր քաղցրութ̅ յապաղանաց դաշին , բայց 'ի
զուր • պնդէր էր նոր հարուածովք որոտման ու-
շադիր առնել զքաղաքավարութ̅ի որդւոյն պարսից
և զինքնակալութ̅ի հօրն: Փայլեցան դրօշակք ռու-
սաց , Պասկեւիչ դարձաւ 'ի Դաւրէժ : Զօրք
ռուսաց մտին 'ի Մէնան և յետ երկուց աւուրց
առին զամրոցն Արդեբիլ : Հարուածեալ եր-
կիւղիւ , Շահն առաջարկեաց դաշինս : Ոսկին
պարսից եհաս առ դրօշակս ռուսաց : Թուրք-
մէնչայ նշանակեցաւ վ̅ տեսուե̅ կոմսին Պասկե-
ւիչի և Աբբաս միրզայի: Միջնորդն 'ի մէջ հայ-
ոց և ռուսաց՝ զօրագլուխն Լազարեւ գնայր
'ի միասին ընդ հերոսին , և լցան կամք հայոց :
Թէպէտ ըստ չափու վճարելոյ քսան միլիոն արծա-
թի դահեկանաց պարսից պնդէր էր աստիճան առ.
աստիճան ելանել ռուսաց 'ի նահանգաց , զորս
կալան նոքա յայնկոյս Երասխայ, այլ 'ի հնգե-
տասաներորդ փուբղայի դաշնադրուե̅ց նշանակել

եղև ամ բնակչաց և ատենաւորաց Ատր-
պատականի առ մի ողջոյն վս ազատօրէն անցա-
նելոյ հանդերձ ընտանեօք 'ի պարսկական գա-
ւառաց 'ի Ռուսաստան,. և վս հանելոյ և փա-
խառելոյ զշարժական կալուածս․ իսկ վս անշար-
ժից եղան հինգ ամք։ Տարածանելով զհայե-
ցուածս իւր յապագայ վիճակ հայոց պարսկաս-
տանի, հերոսն ռուսաց խնդրեաց․ զի հայք,
որ՞ց հանգամանք արգելուն միաւորիլ այժմէն
ընդ որդիս ռուսիոյ, ընկալցին 'ի Շահէն զնե-
րողութի, ոչ հայելով ոչ 'ի քաղաքական գիտա-
ւորութիւնս և ոչ 'ի ջերմեռանդն գործակցութին
զօրացն ռուսաց։ Բայց թուէր, թէ սակաւ
Հայք շահեցան այդպիսի ներողութե շահին։
Լուեցին որոտմունք պատերազմաց, այլ ոչ
դադարեցան բարեբար կարգադրութիք յաղթա-
կանն Ռուսաստանի։ Անյապաղ յետ դաշնադ-
րութե հարկ եղաւ 'ի վր Լազարեւի, որ բազում
գործովք ցուցեալ էր զաջողակութի առ ամ․ զի
նա լիցի առաջնորդ գաղթելոյ քրիստոնէից Ա-
տրպատականի։ Կարծիք էր թէ Նեստորականք
որոց թիւ յոյժ աւելի էր քան զհայոցն գաղ-
թելոց 'ի պարսկաստանէ, գտանիցեն զաւելի օ-
ժանդակութի 'ի հոգատարութէ ռուսաց, այլ ոչ
այնպէս վճարեցան իրք․ ըստ խորհրդոց խորա-
մանկ պարսից նք եդին զայնպիսի դաշինս, զորս
ուղղադատութին հրամայէր մերժել․ զի ռուսաս-
տան 'ի նոր որդիս իւր ցանկայր տեսանել զճշմա-
րիտ եռանդն սրտի, և ոչ զխորամանկութի։ Ջա-
նելով զպատմութի ինքնամատոյց լինելոյն հայոց․

մեք ոչ յիշեցուք զՆեստորականս, որք զշահա-
սէր ձեռն ձգէին առ ռուսս, իսկ զսիրտս տային
պարսից:

Կանոնք որ տուան վ՟ փոխադրելոյ զհայս պարու-
նակէին յինքեանս զիննեւտասն հատուածս. Եւ և գե-
րակատար կանոնք յայնժամ հասանէին պատշաճ-
եալ նպատակին, յորժամ միտք և հոգի կատարողին
միանան ընդ հոգւոյ և մտաց հրամանատուին:
,, Տամ քեզ հրաման, ասէր Սուվորով ցԻշխա-
,, նըն Բագրատիոն ,, ասացեալ է՝ գնալ յաջ՝
,, Բայց եթէ տեսանես, թէ փոխեալ է թշնամին
,, զտեղին, աչքդ և դատողութիւնդ ասեն՝ գնալ յա-
եակ: Յո՟մ պատահմունս ո՟մ յաջողուած կախ-
եալ կայ զմարդկանէ: Պասկեւիչ ընտրելով զզօ-
րագլուխն Լազարեւ՝ եցոյց, թէ գիտէ նա ո՟ւր
և երբ պարտ է 'ի կիր առնուլ զայս ոք և զայն:
Գլխաւոր նպատակ կանոնացն կայանայր յայնմ,
զի մի՛ ստիպեսցեն զժղվդն առ 'ի գաղթել, այլ
զի ինքնայօժար գաղթել կամեցողաց առաջի դիցեն
զօգուտ ճշմարիտ, զազատութի վաճառականութե,
զստացուա՟մ ազատընտիր երկրի, զվեցամեայն ա-
զատութի 'ի հարկաց, զերեքամեայ ազատութի 'ի դա-
տաստանական մեղապարտութեց և զամենակերպ օգ-
տակարութի և բարեհաճութի, զորս սովոր է ռուս-
սաստան տալ ազգաց նուիրողաց զանձինս լիու-
լի հաւատարմութե հովանաւորութե նր:

Տնանկաց տուաւ օգնութի և անյապաղ նպաստ 'ի
թշուառութի նց: Թէպէտ 'ի վաճառս անշարժ
կալուածոց հայք կրէին նեղութի 'ի պարսկաց,
այլ ոչ երկմտէին ընդ յաջողուածս գաղթա

նուէ ։ Հրաման եղև յորդորել զգաղթականս ՚ի փութալ, զի մի անկցին ընդ բռնութ̄ պարսից, և անվտանգ առնել զն̄ս բացորոշ թղթովք առ ՚ի պաշտպանել զնոսա ՚ի ժամու ելիցն ՚ի հարկաց և ՚ի պարտուց, զոր պահանջէին պարսիկք, որով և հայք մարթացան թողուլ զհաւատարիմ գործակատարս ՚ի նախնի երկրի իւրեանց սակս գործոց և կալուածոց իւրեանց ։

Ընդ այսոցիկ քղ̄քին և կառավարչական հրամանաց սահմանեցան և ա̄մ պատերազմական կարգադրութիւնք․ զի գաղթականք մնացեն ՚ի գաւառս ռուսաց քաղաքական և պատերազմական ապահովութեամբ ։

Հոգի Լազարեվի բորբոքեցաւ նորագոյն ջերմեռանդութ̄․ երջանիկ վիճակն առաջարկեաց նմա կոչել զազգակից գաղթականս ընդ խաղաղական դրօշակօք ։ ՚Ի 9 մարտի 1828 ամի՝ վերջին զօրք ռուսաց հեռացան ՚ի դավրիժոյ․ Աբբաս միրզայ դարձաւ ՚ի մայրաքաղաքն իւր, զոր ետ նմա վեհանձնութ̄ին յաղթողաց․ հայք ՚ի զանազան մերձակայ տեղեաց եկելոց առ թուրքմենչայ, եկին ՚ի Ղարաբաղ ։

Կառավարութ̄ին պարսից կարծէր, թէ սակաւ ինչ խումբ քրիստոնէից ելցէ ՚ի տէրութ̄է իւրմէ, և Նեստորականք հաստատէին զայդ․ բայց գաղթականութ̄ին Հայոց արկ ՚ի սխալս պարսից զանհանգիստ և զստորին երկիւղ․ զի այս ելք էին վ̄ն նոցա հարուած որոտանման ։

Լազարեփ թողեալ ՚ի Դավրէժ զհայազգի կիրառազնդապետն զերկայնաբազուկ Արղութ̄

առ 'ի փոխադրել անտի զհայս , ի՛ւրն ընդ ու-
մանց պաշտօնակցաց դնաց 'ի մարտ , ուր հայք
տեսեալ զնա մեծամայն աղաղակեցին , ողջ եկիր՝
ազգակից և հաւատակից փրկիչ մեր ,,

'Ի մարտի այնր տարւոյ միաւորեցան ընդ Լա-
զարեանի աստիճանաւորք պարսից Միրզամա-
սուտ և Սեմինոյ, ևս և գործակալն անգղիացւոց
Վիլոկ ։ Զէ ինչ զարմանալի, թէ պարսք
ընդ պատրուակաւ վերատեսչութե կարգել գաղթե-
լոյն հայոց՝ ջանային ունել զնոսա , և թէ՝ անգ-
ղիացիք ևս զհետ պնդեալ իցեն նմանօրինակ
խորամանկութե յօգուտ պարսկաստանի ։ Յուշ
ածցուք աստանօր , եթէ ընդ վայր երկնչի անգ-
ղիա կամ արևելեան ժողովն անգղիացւոց՝ 'ի
տարածմանէ ռուսաստանի 'ի սահմանս ասիոյ ։
ռուսաստան չունի ինչ պէտս գաւառացն բեն-
գալայ , մադրասու և Բոմբայու ։ Զեն հար-
կաւոր նմա և 23 միլիոն բնակիչքդ , հպատա-
կեալք տուրևառական միաբանութեան անգղիաց-
ւոց․ այլ միայն զիւր ներքին բարեկարգութիւնն
և զքարոզական լուսաւորութին խնդրէ նա ։ Թող-
ցուք երկրորդել աստանօր զաղդի ազդի թելադ-
րութիւ աստիճանաւորին պարսից և գործակա-
լին արևելեան ժողովոյն անգղիացւոց , որք հա-
ւանեցուցանէին նեստորականաց և հայոց՝ թէ
ռուսաստան լինելոց է նոցա երկիր աքսորանաց։

Նեստորականք ըստ օրինակի հերետիկոսութե
իւրեանց երկդիմի խորհէին և 'ի գործս իւրեանց․
զի ցորչափ կարծէին եթէ գաւառն տորպետա-
կան Թաւրոց է միշտ հաստատուն 'ի ձեռս ռու-

սաց, վարէին նոքա զօտիւք Լատարեկի, սակայն իբրեւ եհաս ժամանակն ցուցանելոյ զյայտնի հաւատարմութի̃ իւրեանց առ ռուսս, ծանուցին զպահանջողութիս իւրեանց եւ զկարծեալ իրաւունս, որք ապացուցանէին զխորամանկ եղանակ կամաց նոցա շահելոյ ինչ 'ի ռուսաց. Եւ վնկ Լատարեքի՝ Ճանաչելով զխարդախութիւն նոցա յամի մերժեաց զնոսա վՃռաքար ։

Խորամանկ շողոքորթութիւն, որ դիտէ յարձակիլ 'ի վերայ ամ̃ շարժմանց մարդկային սրտի եհեղ զԹոյն իւր եւ 'ի հոգիս ոմանց բարեմիտ հայոց. սակայն հարկ է յիշել եւ զայն, թէ նեցուկ չարախոհութեղ՝ էր կարի յոյժ զօրաւոր եւ արագագործ ։ Թէպ̃ եւ ըստ 15 յօդուածոյն Թուրքմանչայեան պայմանի՝ քրիստոնեայք եղեալք 'ի գաւառէն ատրպատականի ունէին զհինգ ամ ժամանակի վաճառելոյ զանշարժ ինչս իւրեանց, սակայն տէրութիւն պարսից արգել զաղտնի զգնուած այդպիսի ստացուածոց. եւ ոմանք 'ի հայոց մարագի արարին իսկ զպատշաճաւոր դաշնադրութիս, բայց վաճառականք չեղեն յանձնառու ։ Եթէ զայս օրինակ վարէին պարսք 'ի նոյն իսկ 'ի ներկայութեան ռուսաց, յի՞նչ վիճակ արկանել ունէին արդեօք նոքա զհայս յետ մեկնելոյ ռուսաց. տրտմութեամբ հայեցեալ հայոց յորբուն իւրեանց, զուրկ յամ̃ պատսպարանաց 'ի հայրենիս իւրեանց, ընդդադոյնս խնդրէին 'ի ռուսաց, զի տացեն նոցա զոնէ զերրորդ մասն գնոյ ստացուածոց, զոր յափշտակեալ էին պարսք 'ի նոցանէ չարաչար բռնութեամբ, եւ խնդա-

ցին պարոք 'ի միտս իւրեանց, եթէ դրամք ան-
ցանելոց են 'ի ձեռս նոցա. սակայն հերքեաց
4. Ձեզ և պաշտօնակցացդ տամ իշխանութի յուսալից առնել զքրիստոնեայս յանուն մերս կառավարութեան, թէ զինի գաղթելոյն նոցա ՚ի գաւառս մեր, պարապեալքն ՚ի վաՃառակա- նութիւն կարեն ապահովական լինել ՚ի քաղաքս և վարել այնու իշխանութի, զոր ունին վաՃառա- կանքն անդ. իսկ երկրագործաց բաժանեալ լիցի երկիր բաւական և ազատ եղիցին ՚ի հար- կաց զամս վեց, և զամս երիս ՚ի գաւառական ծանրութեանց ։

5. Զգուշից և զգերդաստանոց, որք յայտ- նեսցեն զմտափոփոխելի յօժարութի առ գաղթումն, պարտ է ձեզ յօրինել զառանձին ցուցակս՝ ըստ

օրինակին զոր տաս եղաք, նշանակելով 'ի նմ զգերդաստանս, որ վասն յետին չքաւորաց խնդրեսցեն զօգնութիւն 'ի ժամանակի եկից, և զպատիկ ցուցակս առաքեսջիք առ իս. իսկ յետ երանելոյն իմոյ յափշտակմանն, առ վերատեսուչն զօրաց որ միալոց է տաս ։

6. 'Ի գաւառս ուստի փութայէս երանելոյ են զօրք մեր, և մանաւանդ 'ի մօրաց և 'ի շրջակայս նորա, հրապարակել հայոց, զի սկիզբն արարցեն զգաղթականութ յայժմ իսկ ժամանակի, կամ զոնէ գնասցեն 'ի միասին ընդ զօրս. քանզի յետ երանելոյն զօրացս՝ հայք ոչ միայն զրկանաց և նեղութեց պարտից 'ի ներքոյ անկցին, այլ և արգելեալ իսկ լիցին բոլորովին այլ և այլ պատճառանօք ։

7. 'Ի գաւառս ուրմից և խոյի, որք ըստ դաշնադրութեան մնան մեզ յաւանդ մինչև հատուցի մի և կէս քուրուրն, հրաման տալ բրիստոնէից գաղթել սակաւ առ սակաւ մինչև ցվերջին մայիսի ։ Այլ սակայն ձերդ բարձր ազնուականութ գիցէ ընդ պաշտօնակցացդ պարտիք ներգործել յայժմ հայելով 'ի հանգամանս և 'ի հատուցման դրամոց, զորս պարտական է մեզ կառավարութիւնն պարսից ։

8. Գերդաստանաց կամ համայն գիւղօրէից պատրաստ եղելոց առ գաղթել, տաջիք զթուղթս ապահովութ վս անխափան ընթացից, այլև զթուղթս ազատութ 'ի հարկաց և 'ի ծանրաբեռնութեց ըստ օրինակին, զոր տաս եղաք ։

9. Տաջիք իշխանուի իւրաքանչիւր գիւղօրէից

՚ի թողուլ յետ իւր զայրս հաւատարիմս որ վա-
ճառելոյ զստացուածս գաղթականաց մինչև ՚ի
նըշանակեալ ժամանակն ըստ դաշնադրութես ։
Զ այսոսիկ գործակատարս յուսալից առնել պար-
տուպատշաճն թղթովք ըստ օրինակին, զոր աստ
եդաք. նոյնպէս գրել առ գործակատարն մեր որ կայ
առ Սրբաս միրզայ, կմ՛ առ այն որ լինելոց է
՚ի Դաւրէժ. ոպ զի տայցեն զնմ պաշտպանութի
և զօգնութի այդպիսի գործակալաց ։

՚ի պէտս տեղեկութեան գաղթականաց մինչև ՚ի սահմանս
գաւառաց մերոյ.

10. Վ՟ս յաջող բաւականութե ՚ի պաշարս յընթացս ճանապարհի և առաւելապէս որ լցուցանելոյ զպակասութի ՚ի ճարակս բեռնակիր անասնոց, բաժանեսջիք զգաղթականս ՚ի խումբս խումբս ըստ հաճոյից ձերոց, այնպէս զի յիւրաքանչիւր խմբի լիցին ՚ի 150 ից մինչև ՚ի 300 գերդաստանս ։

11. Զ այդոսիկ խումբսդ, ջան դիջիք տանել մինչև ՚ի սահմանս այլ և այլ ճանապարհօք. զի մի հանդիպեսցին իրերաց ։

12. Կարեն գերդաստանք ը՟ղ կամաց իւրեանց գնալ առանձինն առանձինն, բայց ձեզ չէ պարտ յանձն առնուլ զպահպանութի այնպիսեաց ։

13. Ընդհանրապէս խորհուրդ տալ քրիստոնէից, զի գնասցեն ՚ի գաւառս Նախիջևանայ և Երևանայ, ուր հրամայի առաւելուլ ը՟ղ կարի ըղ-բնակութիւնս քրիստոնէից. Ս. յլ սակայն բնակ-

չաց գիւղին Ուզումչէի և երից գիւղօրէից հայոց, որք առ նոքօք, տաջիք իշխանու͞ի բնակելոյ ՚ի Ղարաբաղ. վ͞ն զի այս երկիր մերձ է առ ն͞ա.

14. Ա͞ առաջնորդելոյ ն͞ց՝ զիւրաքանչիւր մասն սպառազինեսջիք միով յիսնապետաւ յայնցանէ որք այժմ նշանակեցան վ͞ն ձեր. և կամ խնդրեսջիք զայնպիսիս, որք գիտեն զլեզու հայոց ՚ի վերաստեսչացն զօրաց. նմանապ͞ն և զիրկուս կմ զհինգ հեծելազօրս վ͞ն իւրաքանչիւր խմբի.

15. Յ͞րբ ՚ի շրջանի ուրուք խումբ ինչ գաղթականաց շարժեսցի ՚ի տեղւոջէն, յայնժամ ձերդ բարձր ազնուու͞ի կ͞մ ո՛ և իցէ ՚ի պաշտօնակցաց ձերոց պարտի իսկոյն տալ զայնմանէ զյայտարարու͞ի՝ ժամանակաւոր կառավարութ͞ն երեւանայ, նշանակելով զթիւ գերդաստանայն, զանուն պահապան զօրաց, զտեղին ՚ի սահմանս մեր յոր դիմելոց են. թէ յո՞րպիսի տեղիս բնակէին նք, ՚ի դաշտի՞ թէ ՚ի տապարայ͞ն անապատս, ՚ի լեռնոտ թէ ՚ի սառնորակ տեղիս, թէ զո՞ր կենցաղավարու͞ի ունէին, և թէ ո՞րքան են անասունք նոցա.

16. Ա͞ տալոյ զօգնու͞ի իսպառ. տնանկ գերդաստանաց իբր ՚ի փոխ, ֊ և վ͞ն ծախուց զորս չէ հնար նախատեսանել, ձերդ ազնուու͞ի ունի ստանալ ՚ի կառավարչէն այդր պարտաւորու͞ի ՚ի ներգործական ներքին խորհրդականէ ՚ի ժուկովսկիոյ զ25 հզր արծաթ ռուբլիս, զորմէ տամ ձեզ իշխանու͞ի աւանդել ՚ի ձեռս իւրաքանչիւր աստիճանաւորի, զոր առաքեսջիք յոր և իցէ շրջան. բայց այնպէս զի այս տուրք մ͞ի

յաւելցինքան զտասն ռուբլի առ խուրաքանչիւր գերդաստան․ և միշտ նշանակեսցին առանձին թըղթովք որք առնուն զայնս, հանդերձ վկայութ. ծերոց կմ՝ քհնյի այնր բնակութ, առ որ վերաբերին տնանկք տեղւոյն ։ 'Ի գործ ածելն զայսոսիկ դրամս՝ ձեզ և պաշտօնակցաց ձերոց պարտ է կացուցանել զպարտուպատշաճն հաշուագրութ ։

17․ Զեր և պաշտօնակցաց ձերոց պարտաւորութիւնք, բաց 'ի նշանակելոյ վն ուղեկցութ գաղթականաց, տեսցեն ցայն վայր, մինչև գաղթականք մնացեն 'ի սահմանս տէրութ մերոյ, քանզի վն նշանակելոյ զտեղիս 'ի մուտս գաղթականաց, վն ցուցանելոյ նց զկարևորն օժանդակութի յերկրէ և վն գործակցութ առ գաղթումն նց, կառուսցի 'ի ժամանակաւոր կառավարութն երևանայ՝ ընկերութի․ որում տացեն զպատշաճաւոր ծանօթութի խուրաքանչիւր մասն գաղթական հայոց վաղվակակլի յետ մտից իւրեանց 'ի սահմանս մեր։ Որց վն յառաջոյ խուրաքանչիւր խմբի առաքեսցին յընկերութէն դեսպանք, որք զոյգ ընդ պահպանական զօրաց առ գաղթականս եղելոց առաջնորդեսցեն նց մինչև 'ի տեղին նշանակեալ ։

Յետ ելանելոյ 'ի Ղարաբաղէ՝ այդ պարտաւորութի յանձն լիցի հոգաբարձութ շրջակայ պատերազմական վերակացուին իշխանին Աբխազովի ։

18․ 'Ի՝կատարել բոլորովին զգործս ձեր՝ ունիք հատուցանել առ իս զկատարեալ համար գործոց ձերոց, և մանաւանդ զդրամոցն, զորս ծախիցէք դուք և պաշտօնակիցք ձեր հարիւրապետք և յիսնապետք․ 'ի վերջին հաշուագրութ

ձերում եղեն լիցի ցուցակ անուանց գերդաստանաց, որոց տացի իբրև 'ի փոխ օգնութ̆ի ինչ դրամոց, և վկայագրուլիք ն̃ց 'ի ստանալն զայն դրամ, զի այդպէս հնար լիցի զկնի ժամանակաց պահանջել 'ի նոցանէ զայն պարտս, որ լինիցի յընթացս վերջին հինգ ամաց յետ անցանելոյ հինգ ամայ մտանելոյն քրիստոնէից յերկիր մեր։

19. 'Ի դրամոց 25 հազար ռուբլեաց զորս առաքեցաք առ ձեզ, ունիք դուք տալ ը̅ թուոյ վերստին երկու լումայս վ̅ն խուրաքանչիւր վերստի, վ̅ն հարիւրապետաց յերիս երիվարս և վ̅ն յիսնապետաց յերկուս՝ որովհետև պարտ է 'ի վարձու ունել զերիվարս ազատ գնով. այլ բաց յայնմանէ հարիւրապետք և յիսնապետք 'ի ճանապարհորդութ̆ունիցին և զայլ ծախս, վ̅ն պակասեն դրամոց. վ̅յ 'ի դրամոցս աստի հրամայեմ ձեզ տալ վ̅ն նոյնօրինակ ծախուց 30 արծաթ ռուբլի հարիւրապետաց և 20 արծաթ ռուբլի յիսնապետաց յխուրաքանչիւրում ամսոջ։

Ստորագրեալ. Հրամանատար բացորոշ կովկասեան գնդին աջակից զօրագլխապետն Պասկեվիչ։

'Ի 26 փետրվարի 1828 ամ. 'ի տփխիս.

## ՅԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ.

### Քրիստոնեայք,

Լսելի եղև յականջս իմ, թէ արք չարամիտք ջանան ոչ միայն հրապարակել զսուտ և զան-

պատեհ զօրոյս, այլև տալ երկիւղ մեծ, որոց կամքն անցանել յօրհնեալ ռուսաստան. և զայս օրինակ կամին դարձուցանել զձեզ 'ի գովելի ցանկութենէ սրտի ձերոյ։

Եւ ես առ 'ի հերքել զայս ամ ըստ պար-տեացն որովք բեռնաւորեալ եմ 'ի սպարապետէն, և 'ի հաւատարմուէ ազգին որ առ իս, յայտ առնեմ ձեզ, թէ մեծահոգի ինքնակալն ամ ռուսաց պարգևէ այնոցիկ որք ցանկան գաղթել, զապահով, զխաղաղ և զերջանիկ տեղի ապաստանի 'ի յընդարձակ կայսրութեան իւրում։

'Ի գաւառսն Երևանայ, Նախիջևանայ և Ղարապաղու, զոր դուք ընտրեսջիք, տացի ձեզ լայնատարած և արգասաւոր երկիր, որ արդէն իսկ ըստ մասին սերմանեալ է. և 'ի պտղոյ նորին զտասներորդ մասն միայն տաջիք տէրութ. և յընթացս վեց ամաց ազատ լինիջիք յամ հարկատուէ. և որք միանգամ աւելի աղքատ իցեն 'ի ձէնջ, տացի նց օգնուի չուելոյ։

Որք միանգամ թողուն աստ պհունձս իւրեանց և զանշարժ ինչս, յետ առաքելոյ զընտանիս իւրեանց կարեն թողուլ աստ զորս ոմանս 'ի վաճառել զնս մինչև ցհինգ ամս՝ ըստ սահմանադրուե արարելոյ 'ի թէուլիս դաշանց թուրքմանչայի։ Զանուանս ևզհաշուէգիրս ընչիցն զորս թողջիք աստ, առաքեցից մերում գործակալի որ առ Ապամիրզայ շահզադայն, զի լիցին ը պաշտպանութ նորին կայսերական մեծուե որում լինիջիք հպատակք։ 'Ի ռուսաստան

տեսջիք զթշուառութիւն ամ կրօնից. և զհա-ւատարմութիւն իւրեանց ուսուց ի այլոց հպատա-կաց կայսերն. անդ մոռասջիք զամ նեղուիս զորս կրեցիք. անդ գտջիք զնոր հայրենիս բնա-կեալ ՚ի քրիստոնէից, և ոչ ես տեսջիք զար. կրօնան մեր ՚ի նեղութ. անդ կեցջիք ը հովանա-ւորութ օրինաց և զգասջիք վաղագոյն զբարե-րար ազդեցութ նոցին. հուսկ ապա անդ միջակ ձեր բարեգոյն լիցի. և փոխանակ ստկաւուն զոր կորուսջիք, անդ տացի ձեզ հարիւրապատիկ: Ճշմարիտ է թէ թողուք զերկիր ծննդեան ձերոյ, որ սիրելի է ամյն. բայց մտածելն թէ բնակելոց էք ՚ի քրիստոնեայ տէրութ, պարտի ազդել ՚ի ձեզ զմեծ ցնծուի:

Քրիստոնեայքն ճապաղեալք ՚ի գաւառս պարս-կաց տեսցեն միրջազէս զանձինս ժողովեալ ՚ի մի վայր. և գիտէ՞ք արդեօք թէ բարութիւնք մեծ ինքնակալին ռուսաց որչափ ունի վար-ձատրել զհաւատարմութ ձեր:

Փութացարուք, բարեկամք իմ, ժամանակն անդէն է. զօրքն մեր ը հուպ դատարկեսցեն զգաւառս պարսկաստանի. յայնժամ զուցէ բա-զում արգելս դիցեն ձեզ. և մեք կորուսանի-ցեմք զմիջոցս պաշտպանելոյ և ապահով առնե-լոյ զգաղթուա ձեր. զոհեցէք զսակաւն և ՚ի սա-կաւ ժամանակի, և առատօրէն ընկալջիք զամե-նայնն և ՚ի մշտնջենաւորս:

Գոլկովնիկ և կաւալեր կայսեր ռուսաց, Լա-զարոս Լազարեանց. ՚ի 30 մարտի. ՚ի քա-

ղաքս Ուրմի.

# ՅԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ ՉՈՐՐՈՐԴ.

## Ճամար

Մատուցեալ ընծայականաւոր նորագիրական ատենին և կոմսին Պասքեւիչ՝ ըմբռնոց Լազարեան ձեռնարկեալ վերաբերեալ գաղթականութեան Հայոց 'ի սահմանս ռուսաստանի :

'Ի 1827 ամի յընթացս երևելի յաղթութեանց զօրացն ռուսմեծին Կովկասեան գնդի՝ եսես ձերդ պայծառափայլութի ըմբռնաւորմունս ազգին Հայոց, որ ձեռնտու լինէին յամ՝ յառաջադիմութիւն ռուսացն զինուց.... յունելս զպաշտօն քաղաքապետի 'ի Թաւրէժ քաղաքի՝ ըստ կամաց ձերոց եւոս զանձն իմ 'ի պատրաստութիւն վս գաղթման ազգին այնորիկ: Գոլով հաւատակից պատուեալ 'ի նոցանէ՝ յաջախ յաջախ հաղորդէի ձերումդ պայծառափայլութեան զզգացմունս ջերմեռանդութեան Հայոց առ մեծ արքայն ռուսաստանի, որ հաստատուն առնէ զբարօրութի ամ՝ մարդոյ :

Յետ առնելոյ ձեր զարժանափառ վս ռուսաստանի զխաղաղութի ընդ պարսկաստանի 'ի 1828 ամի՝ պայծառափայլութի ձեր յանձն արար ինձ յանդհանել դգաղթականու քրիստոնէից 'ի սահմանաց պարսից 'ի գաւառս ռուսաց 'ի Նախիջևան և յԵրևան, որք բարեհաճուք կայսեր ամենայնին այժմ Գաւառ Հայոց :

Յետ ծառայութեան վիճակի՝ ծանրացելոյն 'ի վր Հայոց և եկեղեցեաց նոցա առելի քան զչորս

դարս. զառաջինն միաւորելն զազգ ընդ հզօրն ռուսաստանի և նորին հեզ և խոհեմ օրինաց՝ է սկիզբն գործոյ մեծի, որ բոլորովին ձեզ վերընծայի. իսկ ինձ՝ իբրև ուսուց պաշտօնատարի 'ի ձերդ պայծառափայլութե̃ արժանացելոյ այդչափ քաղցր յանձնարարութեան՝ ընէր 'նա զգերազանց պատիւ, և իբրև հայկազնի՝ զկատարեալ բարեբաղդութի̃ :

'Ի սկզբան ոչ ինձ՝ նոյնպէս բազմաց թուեցաւ գործդ ոչ դժուարին ինչ, յաւէտ ես այնու զի 'ի լինել հաշտութեան ընդ պարսկաստանի, ոմանք 'ի հայոց և 'ի նեստորականաց անձամբ գային առ պայծառափայլութի̃ ձեր խնդրել հրաման գաղթելոյ 'ի սահմանս ռուսաց: Այլ յետոյ՝ իբրև հարկ եղև ն̃ց բաժանիլ 'ի զանձուց և 'ի գերեզմանաց աշխատասէր նախնեաց իւրեանց, որ թողեալ էին ն̃ց 'ի ժառանգութի̃ զլայնածաւալ և զարգաւանդաբեր դաշտս. և իբրև եհաս ն̃ց լսանել զբազմամեայ շինուածս ա̃մ շահուք նոցին առ շինական կեանս, և ընկերկայ հաստատունըն ընդ ապագայ անյայտին փոխանակել, նեստորականք զառաջինն կամեցան՝ զի հատուցին ն̃ց ը̃ փոյթ դրամք ա̃մ ընչիցն՝ զորս թողուլինն. և ապա հայք ես խնդրէին՝ զի փոխանակ նախնի շինուածոց իւրեանց գնն է տացի ն̃ց երրորդ մասն դրամոց, զոր արժէին անշարժ բարութիք ն̃ց: Բայց ոչ ինչ խափանեալ յայտնի արգելանաց՝ աւելի ք̃ զ8000 գերդաստանս հայոց փոխադրեցի ես յերկիր ռուսաց 'ի նոր գաւառն հայոց: 'Ի բազմաթիւ նեստորականաց՝ բնակելոց

յԱտրպատական , ծանր դժուարութ հալեւ ու-
րեմն մարթացայ փոխել իբրեւ զ100 ընտանիս, թէ
պէտեւ 'ի գործ եդի անդադար զճնարս համոզե-
լոյ զնո . բայց յայտ ցանէ զաղթեցուցի զերկուս
նեստորական իշխանս զՍարխոշ եւ զԱւահմեր-
ան՝ որ ունէին իշխանութի 'ի վերայ ժողովրդեան՝
տալով նոց զերեւելի նպաստ. սակայն միւս նեստո-
րականք վճռաբար յայտնեցին , զի թէ կառավա-
րութին ռուսաց ոչ վճարէ նոց զգինս լքանելի ան-
շարժ ընչից նոց՝ չունին շարժիլ 'ի տեղւոջէ :
Առ յաղթելոյ իմ վերջիշեալ դժուարութեց
եւ առ փոյթ յառաջադիմութի գաղթման , պարտա
կան եմ հաւատարմութեան հայոց առ գերդաս-
տանն նախնեաց իմոց , եւ ջերմեռանդութեան
յինապետաց առ իս եղելոց՝ որք իմ ճշդու-
լնուին զհրաման իմ , զորոց յիշատակել ունիմ
'ի փախչանի անդ համարոյս :
'Ի 1828 ամի 'ի փետրվարի 26 ընկալայ 'ի
ձերդ պայծառափայլութէ զհրաման գաղթեցուցա-
նելոյ զատրպատականաբնակ հայս եւ զայլ քրիս-
տոնեայս 'ի գաւառն Երեւանայ , Նախիջեւանայ
եւ Ղարաբաղու . որում հնազանդեալ անդան-
դաղ արարի զընտրութի յինապետաց 'ի ձէնջ
հաստատելոց . եւ 'ի նշանակել 16000 ռուբլի դա-
հեկանաց 'ի նպաստ գաղթականաց՝ ընկալայ
զուլթ հազիրս. եւ սկիզբն արարի կատարելոյ զպաշ
տօնն ինձ յանձն եղեալ : Գնդապետն Մելիքով
ընկալաւ զհրաման փոխել զհայս յուղղումջի դեղ-
ջէն եւ 'ի շրջակայից նորին. Զարդութիւն գնդա-
պետն երկայնաբազկեան՝ թողի ես 'ի Դավրէժ

'ի լինել դէտ գաղթման հայոց քաղաքին և գիւղօրէից, և յօգնականութի նմա տուան յիսնապետք և դրամք 'ի նպաստ: Իսկ ես ընդ այլոց յիսնապետաց ուղևորեցայ 'ի 29 փետրվարի 'ի խանութիւնն մարաղայ, և 'ի մին մարտի եկի 'ի քաղաքն մարաղ:

Ցընթացս ողջոյն գործողութեանց իմոց կային առ իս պահապան գործակալք պարսից և անգղիացւոց:

Գաղթումն հայոց յանկ ել յետադայ օրինակաւ: Ջան եդի դնել զկատարեալ ցանկուի հայոց 'ի գաղթել, ինքնին շրջելով յամ քաղաքս և 'ի գլխաւոր գիւղօրէս. ապա ընտրեալ զյաջողագոյն յորոց առ իս էին աստիճանաւորաց, յանձն արարի նոց գլխաւորութի ոչ սակաւ մասին գաղթականաց, ը հրամանաւ նոց կարգեցի զկրասեր պաշտօնեայս և ետու դրամս 'ի նպաստ գաղթականաց: Աստիճանաւորքդ յօրինեցին զցուցակ գերդաստանաց ցանկացողաց 'ի գաղթել, և առեալ զստորագրութի տային նոց զառօրեայ օգնականութի:

Իբրև պատրաստ լինէր խումբն յելանել՝ աստիճանաւորն՝ որ դիտէր գաղթման խանութեանն կամ բազում գիւղից, հայեցեալ 'ի հանդամանսն՝ ինքնին ելանէր ը նոսա կամ առաքէր զյիսնապետ ոք. խմբիցդ ուղեկից լինէին սակաւ հեծեալք կամ հետևակ զօրք, և 'ի պակասիլ զօրաց զինեալ լինէին ոմանք 'ի գաղթականաց:

Գոլով միշտ ներկայ յելանել անդ ժողովր-

դեան կամ հսկելով ճանապարհի նոցա, ընկալայ ես 'ի տեղւոջն Ծոփք զձայնաւոր վճիռ պայծառափայլութեան ձերոյ, առնել ը̅ խոհեմուե̅ ընդ դրամս ոչ և կամիմ. և տեսեալ 'ի մէջ գաղթականաց զհաշմանդամ կանայս զինուորաց նոցա և զայրիս ծանրացեալս ընտանեօք, որ չունէին ինչ հնարս գնելոյ զդրաստս, բաժանեցի ապաքալս տիցդ զդրամս 'ի նպաստ, որք և կացուցանեն զմեծ մասն ծախուց արտաքոյ սովորութեան. ոստիկանն վարեաց բարեկարգութեամբ զյանձնարարեալ նմա զժողովուրդն ցսահմանս ռուսաստանի, և անդ յանձն արար զնս տեղական կառավարութե՛ ծանուցեալ նմա զգալստենէ իւրմէ. իսկ ինձ մատուցին զյայտարարութիւն զթուոց ընտանեաց, և զտուեալ դրամոց, հանդերձ ձեռագրօք որոց ընկալան զայնս:

'Ի սկզբան գործոյս հանդիպեցայ մեծամեծ դժուարութեց: Հայք 'ի սրտէ ցանկային գաղթել. սակայն բոլոր կեանք նց եղեալ կային 'ի տունս, 'ի պտղաբեր այգիս և 'ի քաջ մշակեալ անդս. նոքա պարտաւորեալ լքանել զամ՝ աներկբայ հաւատով յուսային, թէ կառավարութիւն ռուսաց փոխանակ ծանր վնասուցն ունի վարձատրել զնս ընդ անշարժ ընչից. և այնու հաստուցանել նոցա զմիջոցս առ 'ի դիւրին գաղթել 'ի սահմանս կայսերութեան և առ 'ի փոյթ ասպնջականութ̅ անդ: Թուէր պայծառափայլութեան ձերում, թէ հայք կարեն վաճառել զանշարժ ինչս իւրեանց, որոց մնային անդ քրիստոնէից և մահմետականաց. և թէ դիպեսցի նց եղանել ընդ փոյթ՝ թողուլ

առ այն զհրամանատարս ։ Սակայն չերևի այդպէս․ զի տէրութին պարսից գաղտնի արգել հպատակաց իւրոց գնել զայդպիսի ստացուածս, որով և համարեցաւ արգելուլ զհայս 'ի տեղիս իւրեանց, և կամ եթէ նոքա ոչինչ հայեցեալ յայդ կամիցին գաղթել՝ կառավարութին ունի առնուլ ձրի զմնացեալս 'ի նոցանէ զանշարժ ինչս և այնու գանձել ինքեան զերևելի գումար դրամոց ։

Թէպէտ ոմանք 'ի հպատակաց պարսից գնեալ էին արդէն՝ ինչ ինչ 'ի ստացուածոց հայոց, սակայն զկնի յետս նահանջեցան խսպառ 'ի գնելոյ զայնս ։ Ուստի եթէ ը͞ հովանաւորու͞թ զօրաց մերոց չմարթացան հայք առնել ինչ, զի՞նչ առնել կարէին արդեօք գործակատարք նց ։ Կարի մեծ էին ինչք հայոց, սակայն դրամք տուեալք նց 'ի նպաստ ոչ անցանէին քան զ10 արծաթի ռուբլիս առ մէն մի գերդաստան ։

Ճշդութեամբ լցուցեալ զպատուէրձերումդ պայծառափայլութեան՝ չխաբեցի զհայս ունայն խոստմամբք․ այլ ասացի նց ուղղակի՝ եթէ 'ի գաւառսն ռուսաց ոչ կարեն փութով 'ի ձեռս բերել զոր թողուն 'ի պարսկաստան․ և թէ ը͞ հովանեաւ միշտ բարեգործ և հաւատակից իշխանութեան՝ մարթին աներկբայ ակնունիլ բարօրութեան զաւակաց իւրեանց և անդորրութեան սեփհական անձանց․ այսպիսի թելադրութիւնք հաստատեալք յաւէտ ջանիւք առ ի եղեալ յիսնապետաց կալան զանակնկալ յառաջադիմութիս, զի նախ՝ հայք մարաղացիք և ապա ողջոյն ատրպ-

պատական Թողլին զնա, և գրեթէ ամենքեան գաղթեցին 'ի սահմանս ռուսաստանի, թողղայն, զի ընտանիք ոմանք առանց ինչ հովանաւորութեան զօրաց մերոց՝ եկին 'ի հեռաւոր խանուէն Խաղպինոյ և խառնեցան ընդ գաղթականս: Այս անլուր զոհաբերութիւք հայոց արարին զնոսա սպառ տնանկս. և գրեթէ ամենքեան կարօտէին արդէն օգնականութե դրամոց: Պարտաւորեալ նպաստամատոյց լինիլ նոց՝ ջան եղի ունիլ զկարի իմն չափաւոր տնտեսութի, և գումարն տուեալ իւրաքանչիւր ընտանեաց սակաւ է քան զ5 արծաթ ռուբլի:

Մարաղացի հայք ետուն զառաջին օրինակ կատարեալ հպատակութեան: Սակայն 'ի սկզբան մարտի ծածկեալ ունէր տակաւին ձիւն զշրջակայ դաշտս, որ վասն և գրաստք գաղթականաց ոչ գտանէին 'ի Ճանապարհի զխոտ 'ի կերակուր: Այդ իսկ շարժեաց զիս դադարեցուցանել զելս նոց, և դիմել յառաջին յայտարարուի ձերում պայծառափայլութեան 'ի քաղաքն դավրէժ: Եւ այսպէս՝ արարեալ զամ հարկաւոր տնօրինութիւ, և յանձն արարեալ զգաղթուն հայոց խանուե մարաղայ՝ ցզօրապետսն Ղամազով և Վօյնիկով, յեօթն մարտի ելի 'ի մարաղայ և 'ի 10 ներկայացայ ձերում պայծառափայլութե 'ի տեղւոջն Ծովք, ուրանօր ծանուցեալ ձեզ զկրենաւորութէ գործողութեանցս՝ ընկալայ 'ի ձէնջ զքաղցրն վասն իմ զգովաբանութի, և զբաղում խրատս 'ի բերան, որովք և վարեցայ զկնի:

'Ի 10 մարտի դարձայ 'ի դավրէժ, և 'ի 16

անօրինեալ զպաղթումն անուն Հայոց՝ չօգայ ՚ի նաՀանգն Ալմաստու ։ Յայսմ ժամանակի դըն-գես սկիզըն էառ խոխակուն պաղթումն ։ Յայլ և այլ կողմանց տարպատականի ելեալ յաղնաթիւ-րապմութեանց ուղղեցին զընացս իւրեանց զդեան Երուսի ։ Մահմետականք ցուցին պաղթականաց զատտուիկ յոյժ տեղուի, ուղեկից լեալ նոց Հայ-Հայմնոք և ՚ի տեղւո տեղիս քարաձիգ խիկ եղեալ տու նու ։ Ակայն պաշտօնատարք դրնթէ միշտ դի-տային մեզմել զարդար բարկուի և զվրէժխնդ-րուի զաղթականաց, և Հաստատուն իւրեանց ՚ի բայ մերժել զարինՀեղուին անՀրաժեշտ ։ Իսկ կառավարուին պարսից չարգել ինչ զմոլեգին ընթացս Հպատակաց իւրոց, յուսալով՝ թէ զուցէ երկուցեալ այդու զՀայս՝ արգելցէ զնս ՚ի գաղթելոյ ։ ՚Ի 21 մարտի եկի ես յամրոցն դիլ-ման (՚ի գլխաւոր քաղաք սալմաստու) ։ ՚Ի շրջել իմում ընդ գիւղօրէս խանութեանն Ալմաստու՝ ընկալեալ եղէ ՚ի բնակչաց աննկարագրելի իմն խնդութեամբ և չափազանց սիրով ։ Յանձն ա-ռարեալ յօրինել զցուցակ սալմաստեցի Հայոց ՚ի սկզբան ենով. քեան Ատեփաննոս Եպիսկոպոսին՝ վասն չունելոյ յայնժամ աւխս զպաշտօնատարս՝ ՚ի 22 մարտի ելի ՚ի նաՀանգէն սալմաստու և ՚ի 23 եկի յՈւրմի, ուստի Հրամայեցի զօրավե-տին երկայնաբաղկեան ելանել ՚ի դավրիժու Հա-սու լինել պաղթման Ալմաստեցի Հայոց։ Յայսմ ժամանակի մոի ես ՚ի կապակցուի ը Բանկրատե զօրագլխոյն. և շարունակեալ զգործս իմ ՚ի դա-սաւան, որ ը դիտողուը նր՝ յոլովակի կարօտա-

ցոյ օգնականութիւն նորա, որ և ընդ մարթելոյ կատարեաց զխնդրուածս իմ ։ 'Ի հայս խնամութեան Սրբոց զոր զնմանօրինակ եռանդն և զնոյն հաւատ․ սակայն տեսեալ կառավարութեան պարսից զյաջողուածս իմ՝ ոչ յամեաց դնել ընդդէմ ինձ զնորանոր պատնէշս ։

Տեսեալ տէրութեան պարսից յաւէտ ք որչափ յուսայրն զընդհանուր զաղթութիւն հայոց՝ զգաց յանձն իւր, թէ քանի մեծ էր նմա կորուստ բազմամթիւ աշխատասէր հպատակաց ։ Յայնժամ հնարաւոր եղեալ դաշնադրութեանց՝ տեղական կառավարութին և որ առ խէին գործակալք պարսից՝ սկսան արգելուլ 'ի հայս զմնաս զաղթելոյ առ ռուսս, ընդերում թէ զկնի զաղթելոյ իւրեանց անդէն ընդ փոյթ արտացեն զնոս գերիս, և զրկեսցեն զնս յամ հնարից առ շահաւէտ կեանս․ թէ յառաջ ք զհաստատել իւրեանց զհիմն ընտանեաց՝ լաւագոյնք 'ի նոցանէ արք նորահաստկք առցին 'ի զինուորութի են․ թէ մնալով 'ի պարսկաստան՝ ընդ երկար ազատեսցին յամ հարկաց, և հունկ ուրեմն՝ առ 'ի պահել զհայս 'ի տեղիս իւրեանց՝ խոստանային նոցա զրամս աւելի ք որչափ ես եառ նոցա վասն զաղթելոյ․ զորոց և յայնժամ ծանուցի ձերումդ պայծառափայլութե ։

Արկի 'ի գործ զամ հնարս, զորս միանգամ կարէի, և 'ազգն հայոց եկաց միոց անդրդուելի 'ի դիտաւորութեան իւրում 'ի զաղթել․ սակայն կատարել զիմ ցանկութի ոչ յաջողեցաւ ինձ լինելի ։ 'Ի քաղաքն Սուրբ միոցի գրեթէ ցերանել զօրացն ռուսաց, տնօրինեալ անդ զզա-

թուին նահանգացն Ուրմիոյ, Սալմաստու և Խոյի։ Զգաղթել հայոցն Ուրմիոյ յանձն առարի աստիճանաւորին Ղամազովի, եկեալ 'ի խանուէն Մարաղայ, 'ի բաց առեալ զչորս գիւղս, զորս յանձնեցի աստիճանաւորացն Շաբիկովի և Շակուբաթովի. բայց յամրոցն Խոյ՝ վա մերձակայսն առ սահմանս ռուսաստանի, առաքեցի 'ի սկզբան զղարոն խնկելեկին առ 'ի պատրաստել զհայս 'ի գաղթել ։

Յառաջ քան զայս ես առաքեցան յինէն 'ի խանուէն Մարաղայ՝ 'ի քրդաստան՝ աստիճանաւորք արժանահաւատք, որք մեծաւ վտանգաւ կարացին հանել անտի գրանի մի ընտանիս. սակայն այսու սաստկացաւ ցնկրցին աստիճան չարութ քրդաց ։ Յայտնի 'ի առնջեան յարձակեցանն քրդք 'ի մի փոքու խմբի հայոց. կողոպտեցին զնա և ոչ թողին 'ի գաղթել ։ Զայսմանէ ծանուցի զօրագլխապետին բանակատեղի, և բռնութիւք առաջակացդ ստացայ մի սանձահարեցան ։

'Ի 5 ապրիլի զօրագլուխն բանակաւ ծանոյց ինձ, թէ մի քուրուր դրամ ընկալեալ է արդէն 'ի դավրէժ, և թէ ա կարծեաց 'ի 20 նոյն ամսոյ ունին ելանել յՈւրմիոյ զօրք ռուսաց ։ Այդքան առնելեաց զնա, որչափ կինչ մարթ էր, փութացուցանել զգործս գաղթման ։

Յանժամ աստիճանաւորք տէրուն պարսից ելին 'ի խնդիր վերջին հնարագործութ ։ Եկեալ առ իս նամակաւ Աբբաս միրզայի՝ գանգատեցաւ մահմեդ թաղիր խան, իբր թէ լուեալ իցէ 'ի խմբէն, բաղկացեալ 'ի 400 ընտանեաց Ուր-

միոյ հայոցն՝ թէ բռնատատեմք զնա 'ի գաղթել: Ցանկացեալ կշտամբել զանհաւատարմութի նր՝ ը որդւոյ իշխանին Ասկեր խանին՝ գնացի 'ի 12 ապրիլի յամբոցն Խոյ, և անտի իբր միով Ա-ղաճիւ հեռի հասեալ ցվերոյիշեալ խումբն՝ հար-ցաք զհայս, որք միաձայն պատասխանեցին, թէ ելանեմք յօժարակամ,, լաւ է մեզ ճարակել զխոտ ռուսաց ք ուտել զհաց պարսից" առա-ջին նորա ցորդին Ասկէրխանի, զորմէ և առի զգրաւոր վկայութի:

'Ի 13 ապրիլի եկի յամբոցն Խոյ, և նախ ա-րարեալ զկարևոր կարգադրութիս՝ զկատարումն այ-նոցիկ յանձն արարի իշխանաց Շալիկովի և Խո-կրիցկովի, որ արդէն պատրաստեալ էին զնմ հար-կաւոր ծանօթութիս, և 'ի 18 դարձայ յամբոցն Դիլման:

'Ի 20 ապրիլի եկն առ Միրզամասուդ, ա-ռաջին քարտուղար նորին բարձրութե ժառանգին աթոռոյն պարսից, որում ծնոթ էր առընթեր կալ գաղթման Սալմաստեցի հայոց: Սա ետ ինձ զնամակ աբբաս միրզայի, յորում իշխանդ կշտամբէր զիս վն բռնի գաղթման հայոց: Առ-ժամայն պատասխանեցի նորին բարձրութե, ապա-ցուցեալ թէ աստիճանաւորք որ ցուցեալ են զինչէն զսուտ ամբաստանութիս, յաւելլով 'ի նա-մակ իմ զվկայութի որդւոյն Ասկէր խանին: Միր-զա մասուտ հաւատաց արդարութե գործողութեց իմոց:

Ցետ ժամանակաց ինչ, ունելով զպէտս դրա-մոց վն շարունակելոյ գործոցս, առի 'ի փոխ 'ի

զօրապետէն բանկրատեէ զերիս հազար ոսկի դահեկանս. և 'ի զանազան ժամանակս յայլոց անձանց իբրև զերկու հազար դահեկանս, զորս և հատուցի դրամովք զորս առի 'ի ձերդ պայծառափայլութենէ ։

'Ի 20 ապրիլի զօրք ռուսաց ելին 'ի նահանգէն Ուրմիոյ։ Որ մնացեալ էին առ պխտոյից իւրեանց գերդաստանք՝ կրեցին զզանազան նեղութիս 'ի տեղապահ կառավարութ̃են պարսից և գանգատեցան ինձ զայնմանէ։ Այս պարագայք ստիպեցին զիս ջան դնել, որչափ ինչ հնար էր, փութով հանել զսալմաստեցի և զխոյեցի հայս, զի և նոքա մի զնմանն կրեսցեն զչարչարանս ։ Եւ այնպէս զգաղթութիւն արագեցի որով անընդհատ գնացին գաղթօղք և բնակութի̃ ադրպատականի նուազէր յայտնապէս ։

Իբրև հուպ եղեն ցգետն երասխ աւելի քան 5000 ընտանիք, և յետ բաժանելոյ այլոց զնպաստ դրամոյ զոր արդէն ծախեալ էին, ընկալայ նախ զգրութի̃ գաւառային կառավարութեանն հայոց, յորում ծանուցանէր, թէ առ պակասութեան հացի ոչ կարեն տալ զկարևոր օգնութի̃ նորեկ գաղթականաց, և խնդրեն պահել զնս̃ յժողով հնձոց ։ Յետ այսորիկ ընկալայ 'ի 8 մայիսի զհրաման ձերդ պայծառափայլութեան վասն հաւանեցուցանելոյ մեծի մասին գաղթականաց յաւէտ յայժ չքաւորաց դիմել 'ի Ղարաբաղ, ուրանօր յամենայնի կարեն կալ յանհոգս, վասն պահելոյ զոմանս 'ի տեղիս բնակութեան իւրեանց, և վն̃ ոչ գաղթեցուցանելոյ զորս ոչ ունին զհնարս կերակրելոյ զանձինս ։ Զայս հրաման կատարեցի նկատմամբ առ այ-

նոսին, որք թէ և յայտնեցին զցանկութի իւրեանց ՚ի գաղթել, այլ տակաւին ոչ ընկալան զաւօրեայ նպաստ · զորմէ յայնժամ իսկ մի ը̅ միոջէ յայտնեցի ձերումդ պայծառափայլութեան։

՚Ի 9 մայիսի ելաք յամրոցէն դիլման և ՚ի տասն եկի յամրոցն խոյ· յայսմ ժամանակի զօրագլուխն բանկրատև ծանոյց ինձ զվճիռ ձերումդ պայծառափայլութեան՝ թողուլ զչորս քհնապետս կմ՝ զայլ արժանաւոր աստիճանաւորս ՚ի հովանաւորութի գաղթականաց ՚ի նահանգսն Ուրմիոյ, Սալմաստու և Խոյի · որք վասն անյապաղ ծանուցի զայս ողորմութի ձերդ պայծառափայլութ̅ե, ամենեցուն որք գաղթեալ էին և որոց գաղթէին, և հրամայեցի երկայնաբազկեան զօրապետին մի երադել զառաջբումն մնացեալ մասանց գերդաստանաց, այլ պահել զն̅ս յժողովել հնձոյ։

Յետ այնորիկ ը̅ հուպ եհաս ինձ լուր ՚ի նահանգէն Նախիջևանայ, թէ անդ եկեալ հայք կան դեռ ընդ վրանօք, և յա̅մի կրեն զպակասութի յոյժ։ Աճեալ ՚ի միտս իմ առնուլ զփորձ, թէ կարելի՞ իցէ արդեօք այլով իմն կարգադրութե̅ քաղցրացուցանել զվիճակ ն̅ց ՚ի տեղւոջ անդ, ՚ի 17 մայիսի ելի յամրոցէն խոյ, և ՚ի 19 եկի ՚ի քաղաքն Նախիջևան։

Հայեցեալ ՚ի վիճակ գաղթականաց՝ առաքեցի յերևան զպաշտօնակալն Ղամազով հանդերձ յայտարարութե̅ առ նահանգային կառավարութին հայոց, յորում՝ խնդրէի վ̅ն փոյթ ասպնջականութեան գաղթականաց ՚ի տեղիս նոցա և վ̅ն տալոյ ն̅ց զհարկաւոր օգնականութի։ Սակայն առ ՚ի

չգոյէ արքունի գնդոց 'ի խանութեանն Նախիջևանայ առ բնակութիւն՝ ջան եղև համոզել զբազում հայս բնակիլ 'ի խանութիս երևանայ և ղարաբաղու, և հաւանեցուցի զնոս զհետ լինիլ խրատուց իմոց ։ Այլ տեսեալ զխումբն Նախիջևանայ, զի չունէր ինչ հնարս նպաստելոյ գաղթականաց՝ ետու նմ աւելի ք զերկու հազար ոսկի դահեկան ։ 'Ի 21 մայիսի ելի 'ի Նախիջևանայ և 'ի 22 դարձայ յամրոցն Խոյ ։ Կատարելով, որչափ մարթ էր զհրաման ձերում պայծառափայլութեան, դադարեցուցի զգաղթումն բազում հայոց ցիսպառ ելանել զօրայն ռուսաց ։

Յուսկ ուրեմն՝ տեսեալ զմերձաւոր վախճան պաշտաման իմոյ՝ և ցանկացեալ բանիւ հաղորդել ձերում պայծառափայլութեան ինչ ինչ առանձին հանգամանս, զկառավարուէ մասին գաղթականաց որք մնացեալ էին 'ի տեղիս իւրեանց՝ յանձն արարի առ իս եղեալ արժանահաւատ զօրապետին արղութեանց ։ 'Ի 29 մայիսի ելի յամրոցէն Խոյ, և անցեալ ը̅ երևան՝ հանգեայ 'ի Նախիջևան։ Անդ աւարտեալ զվերջին կարգադրուէս իմ, 'ի 18 յունիսի հասի առ պատերազմող զօրսն, որ առ Ղարսիւ ։

Յետ առնլոյ զամրոցն Ախալցխայ՝ կամեցեալ էր պայծառափայլութիւն ձեր հրամայել ինձ 'ի 29 օգոստոսի երթալ յերևան, 'ի յօրինել զառանձին ճիշդ համար գործոց իմոց, և զծախուց ինև ընկալեալ դրամոց ։

Մինչ հայեցեալ 'ի վնաս առողջութեան

անձինս՝ չոքայ ՚ի լինել զհրաման պայծառափայլութեանդ. սակայն ՚ի ժամանել իմ անդ ՚ի տփխիս անկայ ՚ի ծանր հիւանդութի՟, յորմէ հազիւ ուրեմն թեթեւացեալ եմ առ ժամս:

Սակայն ընկալայ զյայտարարութի՟ զօրապետին արդութեան, եւ թէպէտ յաւելեալ ՚ի նմին թուղթք չպարունակէն զամ՟ զխնդիրս, հարկաւորս ՚ի կաղմել զլիակատար համար, այլ զի անդանդաղ կատարեցից զպատուէր ձերդ պայծառափայլութե՟՝ յօրինեցի զայն ըստ այսց թղթոց եւ ըստ առ իս եղեալ ծանօթութեց. հրամայեալ նմ՟ փութով հասուցանել ինձ զլիակատար բացայայտութիս զօրս իբրեւ ընկալայց առաջի արարից ձերումդ պայծառափայլութեան:

Եւ այսպէս սկսեալ զգործս իմ ՚ի 26 փետրվարի 1828 ամի՝ վճարեցի զայնս ՚ի 11 յունիսի նոյն ամի, ՚ի բաց առեալ զթողեալսն ՚ի տեղիս նոցա իբրեւ զ1500 ընտանիս. որը վա՟ չէր ինձ մարթ ցայժմ առաջի առնել ձերդ պայծառափայլութեան զճիշդ համար ծախուց դումարոց, զոր եւ յիշեալ եմ ՚ի համառօտ համարի անդ առ ամրոցաւն Ղարսի:

Յընթացս բոլոր ժամանակին ընկալեալ եմ ՚ի ձերդ պայծառափայլութե՟ զ14 հազար ոսկի դահեկանս եւ զ400 արծաթի ռուբլիս. յայդմ գումարի են եւ աւելի քան 2000 ոսկի դահեկանք զորս ետու խմբին Նախիջեւանայ, եւ այդչափ դրամովք գաղթեցուցի զ8249 ընտանիս քրիստոնէից:

Զայս գումար, որ յանձնեալ էր իմում եւ ելթ հաւատարմութե՟, յանձն արարի Տերութեանք

հարիւրապետին, որոյ սատոյկ ջերմեռանդութիւն, ճշդութիւն և բարեկարգութիւն ՚ի գործս իւր՝ արժանի են առանձին մտադրութեան ձերդ պայծառափայլութեան :

՚Ի յաւելեալ թուղթս որ ը̅ սմին՝ տեսցէ պայծառափայլութի̃ ձեր, թէ զո՞րչափ ընտանիս գաղթեցուցեալ է իւրաքանչիւր ոք յաստիճանաւորաց առ ի եղելոյ, և զո՞րպիսի գումարս տուեալ են ՚ի նպաստ : Նոյնպ̅ս թէ որքան դրամք են տուեալ յխնապետաց վ̅ս կերակրոյ, վ̅ս ճանապարհի և ծախուց արտաքոյ սովորութեան ը̅ ձերումդ որոշման :

Առաջադրեալ ձերումդ պայծառափայլութե̃ ողջոյն ընթացս գործողութեան իմոյ, համարձակիմ արդեօք յաւելուլ, թէ լցուցեալ բնակութ̃ք զառ ՚ի ձէնջ ստացեալ զլայնատարած նահանգս աւելի ք 8000 ընտանեօք վաստակաւոր և աշխատասէր ազգի, վ̅ս թագաւորութեան բացցէք զնոր աղբիւր հարստութեան . և առանց ամ՛ երկբայութե̃ մարթ է գուշակել, թէ գումարն ծախեալ վ̅ս գաղթականաց, որչափ ը̅ ինքեան մեծ ևս իցէ, արագ արագ մարթի առաւելութ̃ իսկ դառնալ առ կառավարութի̃ն : Այլ ՚ի տեղի անապատից, որք ծածկեն այժմ զդաշտս հինաւուրցն մեծին Հայաստանի՝ կանգնեսցին բազմահարուստ գիւղօրայք, գուցէ և քաղաքք իսկ լցեալք բնակութ̃ք աշխատասէր և առ արտաքայն մեր հաւատարիմ արանց :

Ակայ գոլով ամ՛ զոհաբերութե̃ց և մտերմութեան հայոց առ գահն ռուսաստանի՝ առնում

զհամարձակութի̃ խնդրել 'ի ձերդ պայծառափայլութէ իբրև 'ի ծնողէ նորածին երջանկութե̃նց, ունիլ առ նմ̃ զառանձին զսէր, և միշտ բարեխօսել առ ամենողորմած կայսրն վս̃ քաղցրացուցանելոյ զվիճակ զաղթականաց, և վս̃ հնարից առ հաստահիմնարկութի նորանոր բնակութեանց նց̃, և այնու լինելին 'ի գլուխ տանել զգործ և մարդկութեան և թագաւորութե̃ շահաւէտ :

Կատարումն այդչափ ցանկալի յանձնարարութե̃ լինձ 'ի ձերդ պայծառափայլութէ՝ կացուցանէ արդարև զգերապանծ վիճակ 'ի կեանս իմ :

'Ի վախճանի սոր պարտաւոր վարկանիմ յայտնել, զի կատարելապէս երջանիկ զանձն իմ վարկայց, եթէ պայծառափայլութի ձեր արժանացուսցէ առաջի առնել կայսեր զվարձատրութի անօրինակ ջերմեռանդութե̃ և կատարման ամենադժուար յանձնարարութեանց, ոչ հայելով 'ի վտանգ կենաց իւրեանց, առ իս եղեալ հարիւրապետաց և յիսնապետաց, եկեղեցականաց և քաղաքացեաց, որք երևելի զանձինս արարին յայժ ջերմեռանդութե̃ նպաստելով զաղթման. Ես և զհաստատեալն զմանս 'ի նոցանէ յիրաւունս, որովք 'ի բազմաց վարէին նք̃ 'ի պարսկաստան :

'Ի դեկտ. 24. 1829 ամի. 'ի Թաւրիզ :

# ՅԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

Առանձին յաւելուած գեղեցկագոյն առաջին պատերազմն որ ընդ պարսից, հանդերձ ծանօթութեամբ իւր:

Առաջին և մեծ հոգատարութի գլխաւոր կառավարչին վրաստանի և հրամանատարին կովկասեան խմբի զօրագլխապետին Երմոլովի, 'ի յարձակիլն պարսից 'ի սահմանս ռուսաստանի, եղև ժողովել 'ի մի զամ զզօրս, բաժանեալս 'ի գաւառս գաւառս, և 'ի մի կենդրոն հաւաքել զխումբն ողջոյն մերձ 'ի տփխիս. վճարեալ զայս՝ սկիզբն արար երմոլովն ներգործել: Առ այս նպատակ առաքեաց նա զհայկազուն զօրագլուխն Մատաթեովլ առ գունդն, որք իշխանութ հրամատարին վրաստանի և ռմբաձիգ գնդի, առ կոմն Սիմոնիչ որ բանակեալ էր 'ի վախճանի յունիսի առ աստաֆ գետով, որ կայ 'ի Ճանապարհի 'ի տփխիսայ առ Ելիսաբեթօպօլ: Իշխանին Մատաթեովլի հրաման էր ունել զԵլիսաբեթուպօլիս, և ապա հոգալ զպատրաստութի պաշարոց: Յերրորդ սեպտեմբերի հանդիպեալ ըն թշնամեաց առ Շամխոր գետով՝ խիպառ խորտակեաց զնս. բոլոր հետևակազօրն նոցա անկաւ 'ի տեղւոջ անդ, և մասն ինչ 'ի գերութի վարեցաւ: Այս առաջապահ գունդ պարսից էր ը հրամանաւ մահմետ միրզայի անդրանիկ որդւոյն Աբբաս միրզայի, ընդ առաջնորդութ փեսայի Շահին էմիրխան սարդարի, որ յայսմ պատերազմի սպանաւ: Զհետ

պնդել մատաթովլի խառուն դժնդակաց՝ 'ի ծագել չորրորդ աւուր սեպտեմբերի էառ զԵլիսաբեթուպօլ: 'Ի ժամանակի յայսմիկ եկն բարձր հրամանաւ Կայսեր 'ի տփխիս՝ զօրագլուխ տեղակայն Պասկեւիչ: Երմոլով եղեալ էր 'ի մոլի ապաստել զՇուշի, որ 'ի 21 յուլիսի էր պաշարեալ: Բաժանեալ նորա զզօրսն՝ յանձն արար Պասկեւիչի, զի միաբանեալ որ ընդ խմբի իշխանին մատաթովլի՝ կալցէ զգլխաւոր իշխանութին, և դիմեսցէ 'ի ղարաբաղ 'ի փրկել զՇուշի. յայնժամ խոկ առաքեաց զօրագլխապետն մե լիամինով երկրորդ. սակայն ծանուցեալ Աբբաս միրզայի զխորտակումն որդւոյն իւրոյ, և զյաղթաւութն զօրաց մերոց յելիսաբեթուպօլ եղելոց՝ կոչեցաւ 'ի թաթարաց. և 'ի 5 սեպտեմբերի բարձեալ պաշարումն շուշւոյ՝ դիմեաց յելիսաբեթուպօլ: Արդ իմն վտանգաւոր էր վիճակ խումբին մատաթովլի, զի թիւ նր չանցանէր զ2,500 հետևակաց հանդերձ երկու սակաւ գնդիւք հեծելոց. այլ զթիւ պարսից մարթ էր ենթադրել աւելի քան 40,000, թէ և ոմանք համարէին զնա 70,000: Եթէ յետ նահանջէր մատաթովլն, յայնժամ հայք Ելիսաբեթուպօլի, որք ցուցին զանչափ հաւատարմութին առ դաշն ռուսաստանի՝ զոհ լինէին զայրացման թաթարաց և պարսից. խոկ թողուլ նմա 'ի քաղաքի անդ անհնարին էր առ պակասութն ժամանակի և սակաւութն ջրոյ: Յայսմիկ հանգամանս՝ զհետ գնաց մատաթովլ կարծեաց զօրապետին սեմենիչի. այն է ճեալ 'ի բարձունս մերձ յանտառն, և անտի մարտն

չիւ ցվերջին զօրուն կենաց։ Առ 'ի բազմացուցանել զհրաշէնս բերանյամբոյէն չորս հին թնդանօթք, զորս եղեալ էին պարսիկք 'ի վր̅ սայլից գործելոյ 'ի գերմանացի մշակաց։ Սակայն դանդաղուն և տատամսուն պարսից փրկեցին զմեզ 'ի կոտորեալ կորստենէ։ Աբբաս միրզայ ոչ կարեւոր իմն վարկաւ ունել զառաջս մեր։ Ծանուցեալ Պասկեվիչի զդրից խմբոյն մատաթուլի՝ փութացաւ նմա յօգնուլ. 'ի 10 սեպտեմբերի յառաւօտեան պահու եհաս նա ը̅ դրակունեան նիժեկորտեան խմբի. եւ յետ կիսոյ աւուրն եկն և Միացեալ զօրքն։ Ասատանդիլն թշնամեաց երեւելի եղեւ յերեկոյեան պահու բանակի մերում. Նոյնպէս 'ի 11 և 'ի 12 սեպտեմ, երեւեցան գումարտակք հեծելազօրաց, և յայտնի էր արդէն թէ Աբբաս միրզէ անդ է ինքնին ամ՛ զօրօք իւրովք։ Յայսոսիկ երկուս աւուրս պարապեցաւ Պասկեւիչ 'ի շինել յԵլիսաբէթուպօլ զհիւանդանոցս և եւ հանդիստ զօրաց, որ եկեալ էին ը̅ նմ՛ շտապաքայլափոխութեամբ։ 'Ի 12 սեպտեմբերի հրամանն եղեւ ելանել յայգուն 'ի 9 ժամուն առաւօտեան և դիմել 'ի ճակատամարտ։ 'Ի 13 յառաջ քան զորշալոյսն եկին առ-մատթով երկու հաւատարիմ ղարապաղեցի հայք, որք ծանուցին նմ՛, թէ Աբբաս միրզայ եղեալ է 'ի մօտ յարձակել 'ի վր̅ մեր, և թէ ունի զօրս իբր 40,000 արանց և առաւել ևս՝ հետեւակաց և հեծելազօրաց։ Ծանուցեալ վայլմանէ Պասկեւիչի հրամայեաց կանգնել զպաշարատունս, զորովք թօղան երկու խումբք խերսոնեան ամբաձիլ զօ-

րաց, իսկ Յաւելեալ զօրքն ելին ը̃ առաջ թշնա-մեաց։ Կալեալ Պասկեւիչի զաջոյն տեղին՝ Յայր թշնամեաց, սակայն տեսեալ զյամրութիւն նց՝ ը̃ տուեալ հրամանին անկան զօրք ՚ի ճանա-պարհ յետագայ դասակարգութ̃։

1 Կարգն՝ ընդ հրամանաւ Եգերեան գնդի զօ-րապետին Աւենարիուսի,

2 Կարգն՝ ը̃ հրամանաւ զօրապետին և կոմ-սին Սիմոնիչի. երեք կիսագունդք ամբաձիգ զօրաց Վրաստանի, երեք կիսագունդք եօթներորդ կարաբի-ներեան գնդի, յաջ և յահեակ տասներորդ և վեցերորդ կիսագնդից երկու երկու թեթև թըն-դանօթօք։

3 Կարգն՝ նիժեգորոդեան տրակունեան գնդի տեղակալ զօրապետին Ռաբելեան։

Բոլոր պահպանողական թնդանօթք, կաղ-մեալք ՚ի 12 թնդանօթից։

4 Կարգն՝ երեք կիսագունդ խերսոնեան կրե-նադերեան գնդի հրամայող զօրապետին Պօպո-վի։ Յաջ կողմ ՚ի մէջ 1 և 2 դասուց իբրև 500 հեծելազօրք, և յահեակն 200 թաթարք Կազաղեան և բորչալինեան սահմանացն։

Եօթն վերստ տարածութ̃ հեռի յելիսաբեթու-պօլսոյ պատահեցան թշնամեաց ՚ի պատերազմա-կան դասակարգութեան։ Քաջ և փորձ զօրա-գլուխն Աւելխամինով յառաջակարգեաց զ12 թնդա-նօթս ցկէս չափ արձակման հրազինուց։ Սկիզբն պատերազմին եղև կարի սաստիկ հարուածով թնդա-նօթից։ Ըստ սովորութեան տաճկաց և պարսից՝ հեծելազօրք մեր յերկուց կողմանց պաշարեալ

եղեն ։ Հեծելազօրք և թարթառք մեր վանեցան
ցնոյն խոկ ցպաշտպանութիւն . Հետեւակք թշնա-
մեաց այնչափ մերձ եղեն առ այս տեղի, մինչև
որ արձակէին զթնդանօթս՝ գնացին ՚ի բաց ։
Այս յաջողումն եւ համարձակումն պարսից մարտն-
չիլ ՚ի սկզբն հրացանից, տակայն սաստիկ և վճռա-
հատ բաղխումն ահեակ թեւոյն երկրորդ դասու,
վարեցելոյն ՚ի տեղակալ զօրապետէն սէմէնիչէ՝
ը որում միաբանեցաւ և գունդն շիրվանեան՝
յուշինշ դարձոյց զդիտաւորութիւն նց ։ Զահի հա-
րեալ թշնամեաց ՚ի միաբանութէ անտի, որով
զօրք մեր յարձակեցան ՚ի վր նց, ցիր և ցանե-
ղեալ դարձան ՚ի փախուստ ։ ՚Ի ժամանակի խոկ
յայսմիկ զօրագլխապետն պասկեւիչ, գոլով առ
հեծելազօրան՝ եհան դչորս պահեստական թնդա-
նօթս, և արձակեաց հուր սաստիկ ՚ի վր սա-
նեալ աջոյ թեւոյն թշնամեաց . զհետ նր խումբ
մի դրակուն տածեալ զօրաց յարձակեցաւ ՚ի
վր այր թեւոյ և բռնադատեաց զնա ՚ի փա-
խուստ դիմել ։ Յետ այսր բաղխման չերևէր
արդէն զօրք պարսից ՚ի սահմանս մեր ։ Երեք
գունդք նց արկեալք յահեկակողմն և պատա-
հեալք յիւրայնոց՝ զինի պաշտպանելոյ սակաւ ինչ
զանձինս իւրեանց, ՚ի գերութի մատնեցան ։ Պա-
կասութի հեծելազօրաց և ամբից է պատճառ, զի
ոչ խապառ ցրուեցան ողջոյն զօրք պարսից ։
Յայսմ աւուր վարեցաք ՚ի գերութի զաւր իբրև
1500, առաք գերիս թնդանօթս, գերիս դրօշակս
և զբանակ մի ՚ի Կուրալըն ։ Յետ բառնալոյ
իւրոյ զպաշտպանութն Շուշւոյ՝ կարաց Աբբաս միր-

ղայ զամ զզօրս իւր անցուցանել ը Երասխ։ Վնաս մեր չանցանէր քան զ200 արս մեռեալս և խոցեալս։ ՚Ի ժամ սաստիկ բաղխման անկաւ առաջին խմբի չիրվանեան գնդի տեղակալ զօրապետն Արեկով, և ը նմ՝ երկու պաշտօնատարք ՚ի նոյն գնդէ։ Յայնժամ խոկ վիրաւորեցաւ և քաջ տեղակալ զօրապետն և կոմսն Սեմենիչ։

Զայսօրինակ՝ յանկ ել երևելի պատերազմդ, ուրանօր իբրու 7000 քաջք ցրուեցին և կործանեցին զխումբն 40,000 արանց, յորոց ՚ի թիւս էին 18 կանոնաւոր, գեղեցկազգեստ և կիրթ գունդք, և 22 թնդանօթք քաջ յօրինեալք։ Յայմ առաջին պատերազմի, իբրու սկզբան յաղթութեանց՝ մարթ է ընծայել զամ հետևեալ յառաջադիմութիս ՚ի պարսից պատերազմի։

Նկատմամբ առ գաղթումն հայոց կարևոր թուի յաւելուլ, թէ ՚ի մէջ հայոց հպատակելոց տաճկաց, և հայոց հպատակաց պարսից, ոչ և յայտնի է ՚ի զանազան ազգերաց, գոյ երևելի զանազանութի․ հայք ը իշխանութ տաճկաց կրեն զաւելի չարչարանս քան որք ը իշխանութ պարսից։ ՚Ի յաջորդ ժամանակս գաղթումն տաճկաստանի հայոց ՚ի սահմանս ռուսաստանի, չէր այլ ինչ, բայց հետևութի և շարունակութի այսր առաջին գաղթման տարրպատականութենակ հայոց։ Ցգալուստ Լազարեան գնդապետին գաղթեալ էր և ոչ մի ոք, թէպէտ ոմանք առնուին զկկայականս, տարագրէին զանուանս և յուսադիր եւս լինէին։

Գործողութիւնք և թելադրութիւնք երևելի եկեղեցա-
կանաց հայոց, մանաւանդ հաւատարմութիւն ազգին
հայոց առ երախտիս տանն Լազարեանց, յաւէտ
ևս առանձին ժրաջան կարգադրութիւնք և գործո-
ղութիւնք զօրապետին Լազարեան Թեքէլին իշխայս ՚ի
պարսկաստանէ փոխիլ ՚ի սահմանս Կայսերութեան,
այնու յուսով թէ թողեալք ՚ի նոցանէ հայրե-
նիք և ինչք իւրեանց՝ հաստատութիւն կալցեն յա-
պագայն բարօրութիւն ՚ի Ռուսաստան: Զկնի այսր
առաջին գաղթման և այդչափ ազդու օրինակի՝
յառաջ եկն գաղթումն ՚ի տաճկաստանէ. իբր
զի ըստ անխարդախ ծանօթութեց առ մեզ հասե-
լոց յականատես անձանց՝ ՚ի կարնոյ կամ յար-
զրումէ առաջնորդութ. կարապետ արքեպիսկ. տեղ-
ւոյն յամին 1830, յառաջին աւուր յունիսի ե-
լեալ գաղթեցին ՚ի ռուսաստան 3200 գերդաս-
տանք քաղաքացի ուղղափառ լուսաւորչական հա-
յոց, ևս և 3000 տունք ՚ի քաղաքէն և ՚ի շրջակայան
կարնոյ բնակեալ ուղղափառ հայք, ընդ սոյն
գաղթեցին ՚ի կարնոյ և իբր 200 տունք ՚ի մենջ
հերձեալ և լատինացեալ հայք, այլ և իբր 80
տունք յունաց:

՚ի քաղաքէն Ղարսայ գաղթեցին 680 գերդաս-
տանք, և ՚ի գիւղօրէից նորին 1575 գերդաս-
տանք ուղղափառ հայոց, Ամենեքեան ոգիք իբր
12770: ՚ի քաղաքէն Պայազիտոյ յամսեան ապ-
րիլի նոյն տարւոյ գաղթեցին 1200 գերդաստանք,
և ՚ի շրջակայ սահմանաց նորին տունք 3000 ուղ-
ղափառ հայոց: Գաղթականք երից փաշայութեց-
տաճկաց, որոց ՚ի մի հաւաքեալ գումարն լինին

12,655 գերդաստանք, կամ իբր 76,000 ոգիք, եկեալք 'ի ռուսաստան Հայոց՝ հիմնեցին զբնակութի իւրեանց 'ի զանազան տեղիս. 'ի քաղաքն Ախալցիխա և 'ի սահմանս նորին, 'ի գաւառսն Շիրակայ, Երևանայ, Գեղամայ կամ Գեղարքունւոյ. և այլուր: Կալնեցի Կարապետ արքեպն առաջնորդ գաղթականացդ ընկալաւ յամին 1830. 'ի 20 հոկտեմ, յողորմած կայսերէն զպատիւ Ասպետութե առաջին աստիճանի սրբուհւոյն Աննայի. իսկ գաղթականաց տուան 'ի կայսերէ ամենակերպ օգնութի, ուտեստ, պաշար ճանապարհի, սայլք, և դրամք, ըստ իւրաքանչիւրոյն կարօտութե, և ազատութի 'ի հարկաց:

Տեղեկութիք զարժանագով անցից ընդ պատերազմի պարսից հանդերձ ծանօթութբք և մանրամասն դիտելեօք, հաղորդեցան 'ի գովելի և 'ի կիրթ պաշտօնատարաց 'ի պարոն Աննենկովէ և Յիւկրիցկովէ, որք և շնորհակալութե 'ի մէնջ 'ի լոյս ընծային: Ցաւելի է յոյժ զի երկոքին քաջասիրտ զինուորքդ, որք զանձանց իւրեանց տային յոյս բարի, կարի վաղամեռ վճարեցին ըզկեանս զկնի վաստակոց երևելի մարտից, յորս արութե շահատակեալ ոչ ը̄ երկար բաժանեցին ընդ ընկերակցաց իւրեանց զմխիթարիչ պտուղս յաղթութեանց:

ՎԱԽՃԱՆ.